

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՎԻԹ ՀՐԱՅՐԻ ԱԼԱԿԵՐԴՅԱՆ

**Տեղեկատվական
պատերազմներ
(դասախոսություններ)**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 659(042.4)
ՊՄԴ 76 ց7
Տ 308

**Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի
գիտյտրիուրդը**

Կազմող՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ղավիթ Ալավերդյան

Խմբագիր՝ բ.գ.թ., դոցենտ Նաղաշ Մարտիրոսյան
գրախոսներ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մուշեղ Հովսեփյան
բ.գ.թ., Վարդուհի Պետրոսյան

S 308 Տեղեկատվական պատերազմներ (դասախոսություններ)/ Կազմող՝
Ղ. Ալավերդյան. -Եր.: ԵՊՀ հրատ., 2014 – 40 էջ:

Դասախոսություններում ներկայացվում են տեղեկատվական պատերազմների բնույթն ու էությունը, տեսակները, դրանց դրսևորման ձևերը զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև տեղեկատվական պատերազմներին բնորոշ գործառույթներն ու էթիկական-իրավական կողմերը:

ՀՏԴ 659(042.4)
ՊՄԴ 76 ց7

ISBN 978-5-8084-1884-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Ղ. Ալավերդյան, 2014

Դասընթացի նպատակը

Դասախոսությունների նպատակն է ներկայացնել նորանկախ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական դաշտի ձևավորման և զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, տեղեկատվական նոր համակարգի կազմավորման ձևերն ու մեթոդները, ուսումնասիրել և զննահատել տարածաշրջանային տեղեկատվական պատերազմների դրդապատճառներն ու շրջափուլերը, ներկայացնել հայ և օտարազգի հեղինակների՝ տեղեկատվական պատերազմների վերաբերյալ առավել տարածված և ընդունելի տեսակետները, բնութագրել Հարավային Կովկասում տեղեկատվական դաշտի առանձնահատկությունները, ինչպես նաև դասակարգել արտաքին տեղեկատվական ագրեսիայի ձևերն ու մեթոդները:

Ակնկալվող կրթական արդյունքները

Ակնկալվող կրթական արդյունքներն են.

- ներկայացնել տեղեկատվական պատերազմների բնույթն ու էությունը, ՁԼՄ համակարգում տեղեկատվական պատերազմներին բնորոշ գործառույթներն ու էթիկական-իրավական կողմերը,
- վերլուծել տեղեկատվական պատերազմների լուսաբանման հայկական փորձի առավել ցայտուն դրսևորումները, հայրենական և արտասահմանյան հեղինակների տեղեկատվական պատերազմներին նվիրված առավել տարածված և ընդունելի տեսակետները,
- սահմանել ամհատի և հանրության տեղեկատվական անվտանգության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- բացատրել լրատվամիջոցների տեղն ու դերը տեղեկատվական պատերազմների վարման ժամանակ,
- ձևավորել կարծիք ՀՀ ՁԼՄ-ների կողմից տեղեկատվական պատերազմների վարման մեթոդների և մոտեցումների վերաբերյալ,
- ձեռքբերել գործնական փորձ և հմտություն ՀՀ տեղեկատվական անվտանգության ոլորտում այն կիրառելու համար:

Դասընթացի կառուցվածքը

Դասընթացը կազմված է դասախոսությունների և սեմինար պարապմունքների համադրությամբ:

Դասընթացի բովանդակությունը

Դաս 1 (2 ժամ դասախոսություն)

Ներածություն

«Տեղեկատվական պատերազմներ» դասընթացի ուսումնասիրության առարկան: Դասընթացի մեթոդալոգիան և խնդիրները: Դասընթացի դերը տեղեկատվական անվտանգության ոլորտը լուսաբանող լրագրողներ պատրաստելու գործում:

Դաս 2-3 (4 ժամ դասախոսություն)

Թեմա 1

Տեղեկատվական նոր դաշտի ձևավորումը և տեղեկատվական պատերազմների առանձնահատկությունները:

Տեղեկատվական պատերազմների նպատակներն ու խնդիրները: «Տեղեկատվական պատերազմ» եզրույթի առաջացման նախապատմությունը: Տեղեկատվական պատերազմի իրականացման հիմնավորումը: Տեղեկատվական պատերազմի տեսակները: Տեղեկատվական դարաշրջան:

Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը

Տեղեկատվական տեխնոլոգիաների, հատկապես համացանցի արագ զարգացման շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվել միջազգային էլեկտրոնային տեղեկատվության ոլորտում արմատական փոփոխություններ կատարելու և նոր մոտեցումներ մշակելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխության արդյունքում ներմուծվեց «տեղեկատվական դարաշրջան» եզրույթը: Տեղեկատվական տեխնոլոգիաները և համացանցային նորանոր հնարավորությունները դարձան նոր աշխարհի առաջընթացի չափման խորհրդանշի:

Տեղեկատվական պատերազմների տեսությունը, որի սկիզբը դրվեց ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ, այժմ ունի կիրառական մեծ նշանակություն: Այն հաշվի են առնում բազմաթիվ երկրներ տեղեկատվական անվտանգության համակարգի մշակման ժամանակ:

«Տեղեկատվական պատերազմներ» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է 1976թ. ամերիկացի գիտնական, ֆիզիկոս Թոմաս Ռոնի կողմից «Բոինգ» ընկերության համար պատրաստված «Ալաբազահիության համակարգը և տեղեկատվական պատերազմները» զեկույցում: Դեռևս լիարժեք հստակեցված չէ «տեղեկատվական պատերազմներ» եզրույթի սահմանումը, սակայն, ըստ ամերիկացի և ռուս մասնագետների, ենթադրվում է, որ տեղեկատվական պատերազմը նպատակամղված գործողություն է՝ հակա-

ռակորդի նկատմամբ տեղեկատվական գերակշռության հասնելու, նրա տեղեկատվական կառույցները քայքայելու, շարքից հանելու, սեփական գաղափարները թշնամուս պարտադրելու, միաժամանակ՝ սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական կառույցները արտաքին և ներքին ազդեցություններից պաշտպանելու համար: Տեղեկատվական պատերազմներ անվան ենթոր ընկալվում է միջոցառումների մի համակարգ՝ հասարակական կարծիքի վրա ազդելու, մարդկանց վարքագիծը փոխելու, գաղափարներ պարտադրելու և մնամատիպ գաղափարներից պաշտպանելու համար:

Տեղեկատվական պատերազմն ընդամենը միջոց է, այլ ոչ թե վերջնական նպատակ, այնպես, ինչպես օրինակ ռմբակոծությունը պատերազմի ընթացքում միջոց է, այլ ոչ թե նպատակ: Տեղեկատվական պատերազմը կարելի է օգտագործել որպես միջոց ռազմաստրատեգիական հարձակման կամ հակահարձակման համար:

Տեսաբանները հավաստում են, որ «տեղեկատվական պատերազմ» եզրույթն առաջին անգամ լայնորեն կիրառել են չինական լրատվամիջոցները: Այսօր էլ տեղեկատվական հակամարտությունների չին մասնագետներն աշխարհում համարվում են լայնագույններն իրենց գործում: Տեղեկատվական պատերազմ ասելով՝ նրանք հասկանում են քաղաքական, տնտեսական, մշակութային, տեխնոլոգիական և այլ գործողություններ՝ ուղղված տեղեկատվական տարածության գրավմանը: Նրանց հայացքների հիմքում ընկած են չին փիլիսոփա և զորավար Սուև Ցզիի խորհուրդները, որոնք նա շարադրել է իր «Պատերազմելու արվեստը» աշխատության մեջ դեռևս մ.թ.ա. 6-րդ դարում:

Տեղեկատվական պատերազմների հայաստանյան փորձագետներ Կարեն Վրթեանյանը, Սամվել Մարտիրոսյանը «տեղեկատվական պատերազմներ» եզրույթը սահմանում են հետևյալ կերպ. ««Տեղեկատվական պատերազմներ» ասելով՝ պետք է հասկանալ գործողությունների համակարգ, որն ուղղված է հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական ենթակառույցների վրա ազդեցություն գործադրելուն, սեփական տեղեկատվությունն ու տեղեկատվական համակարգերը պաշտպանելուն»: ¹

Այս սահմանումից հետևում է, որ տեղեկատվական պատերազմները ներառում են ոչ միայն տեղեկատվական հարձակումները, այլև տեղեկատվական պաշտպանությունը:

Ներկայացնելով «տեղեկատվական պատերազմներ» եզրույթի վերաբերյալ արդիական դիտարկումներն ու մոտեցումները՝ կարելի է փաստել, որ ժամանակակից փուլում տեղեկատվական հակամարտության օջախներ-

ը օր օրի ավելի սպառնալից չափերի են հասնում և ավելի մեծ վտանգ են պարունակում, քան ռազմական գործողությունները: Մեր կարծիքով, քսանմեկերորդ դարում կողմերից մեկի տեղեկատվական հաղթանակը կարող է կախված լինել նրանից, թե հակամարտող կողմը որքան կկարողանա պաշտպանել իր քաղաքական էլիտային արտաքին, տեղեկատվական-հոգեբանական ներգործությունից, ներքին լսարանը զեծ կկասիի թշնամու տարածած ապատեղեկատվությունից և ժամանակին տեղեկատվական հակահարված կտա թշնամու քարոզչամեթոդային:

1990-ական թվականներին մի շարք զարգացած երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում և Ռուսաստանի Պաշտպանության պետական մակարդակով սկսեցին մշակվել տեղեկատվական պատերազմների վարման նոր հայեցակարգեր և մոտեցումներ:

Իսկ 1998թ. արդեն պատրաստ էր ԱՄՆ պաշտպանության նախարարության «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինը»: Այդ փաստաթղթում, որի հիմքում դրված են «ՌԵՆԳ» «ուղեղային կենտրոններ» մշակումները, ներկայացված է, մասնավորապես, «տեղեկատվական պատերազմ» հասկացության սահմանուը, ըստ որի. «Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ զինված հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը: Սահմանումից հետևում է, որ տեղեկատվական պատերազմը տեխնոլոգիական և հոգևոր-գաղափարական բնույթի ինֆոզեն սպառնալիքների գործնական իրագործումն է»:²

Չամաշխարհային տեղեկատվական դաշտը գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական նպատակներով ակտիվորեն օգտագործում է ուղղորդված տեղեկատվություն ու ապատեղեկատվությունը, որոնք տարբերակելը դժվար խնդիր է շարքային քաղաքացու համար:

Ժամանակակից փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցություն աննախադեպ զլրբալ աճի պայմաններում այս ոլորտի անվտանգությունը դառնում է առանձին երկրների գոյատևման հիմնական խնդիր: Պետությունների կախվածությունը տեղեկատվական տեխնոլոգիաներից տարեցտարի մեծանում է, ընդ որում՝ ոլորտին առնչվող խնդիրներն էլ ավելի են զլրբալացվում, ջնջվում են սահմանները:

¹ Տես **Մարտիրոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության մի քանի հարցեր // 21-րդ դար, երևան 2007, N2, էջ 62:

² **Հարությունյան Գ.**, Քաղաքակրթական գործունե տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում // 21-րդ դար, երևան, 2006, N2, էջ 6:

Տեղեկատվական պատերազմների տեսությունը, որի սկիզբը դրվեց ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ, այժմ ունի կիրառական մեծ նշանակություն: Այն հաշվի են առնում բազմաթիվ երկրներ տեղեկատվական անվտանգության համակարգի մշակման ժամանակ:

Տեղեկատվական պատերազմների տեսակները

Տեղեկատվական պատերազմներ մղելու հնարավորության տեսակետից հայկական ՁԼՍ-ները պայմանակաճորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին սպառման: Ներքին սպառման համար նախատեսված են այն ՁԼՍ-ները, որոնք լեզուն հայերենն է և, որոնք հեռարձակվում կամ տպագրվում են Հայաստանի Հանրապետությունում: Տեղեկատվական պատերազմ մղելու տեսակետից դրանք բավականին անարդյունավետ միջոցներ են, նույնը կարելի է որոշ վերապահումներով ասել նաև Հանրային հեռուստատեսության «Առաջին լրատվական» ծրագրի մասին: Չնայած Հանրային հեռուստատեսությունը հեռարձակվում է նաև արբանյակով, բայց հեռարձակման միակ լեզուն դարձյալ հայերենն է: Շատ ավելի արդյունավետ կլինեի, եթե արբանյակով հեռարձակվող Համահայկական հեռուստաընկերությունը ունենար հաղորդաժամեր անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և հատկապես տեղեկատվական հակառակորդի լեզուներով՝ աղբյուրներն էլ և թուրքերեն: Մեր կարծիքով, ՁԼՍ-ների՝ ներքին սպառման համար նախատեսված հրապարակումները երբեմն հզոր զենք են դառնում հակառակորդի ձեռքում:

Երկրորդ խումբն այն ՁԼՍ-ներն են, որոնք ելք ունեն դեպի համացանց և աշխատանք են ռուսերեն, անգլերեն և այլ օտար լեզուներով: Բնականապես, տեղեկատվական պատերազմի տեսակետից վերջինները շատ ավելի արդյունավետ են: Բայց, ցավոք, դրանք ևս չեն կարող ընկալվել ռուս տեղեկատվության օբյեկտիվ արդյուրներ, քանի որ, եթե գիտես այլ կայքի պատկանելիությունը, արդեն հասկանում ես, որ այն չի կարող գործել սեփական երկրի շահերի դեմ: Անդրադառնալով աղբյուրական լրատվական կայքերին՝ պետք է փաստել, որ դրանց մեծ մասում տեղեկատվությունը պատրաստվում է առնվազն երեք լեզուներով, հաճախ՝ չորս-հինգ, երբեմն էլ՝ վեց:

Էլեկտրոնային լրատվամիջոցները ուշադրություն են դարձնում հատկապես անգլերենին, ընդ որում՝ այնտեղ անգլերենի միջին մակարդակն ավելի բարձր է, քան մեզ մոտ: Մեր կարծիքով, ավելի արդյունավետ կլինի տեղեկատվական մարտերը չեզոք դաշտ տեղափոխելը: Խոսքն այն երկրների լրատվական դաշտի մասին է, որոնք կողմնակալ վերաբերմունք չեն դրսևորում խնդրին: Կարելի է նրանց հետ աշխատել այնպես, որ իրենց հա-

սարկությունն էլ փորձի հասկանալ իրականությունը, և օգտագործել այդ ուղղությամբ բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ Սփյուռքի ներուժը:

Տեղեկատվական պատերազմում ամենահաճախ օգտագործվող զենքը տեղեկատվական «արտահոսքերն» են, իսկ ավելի հաճախ՝ ապատեղեկատվությունը: Սովորաբար տեղեկատվական պատերազմը շարունակություն է կամ նախերգանքը պատերազմի, մշտապես ուղեկցում է իրական պատերազմին, հաճախ էլ մաս է կազմում դիվանագիտական պատերազմ-ներին:

Այս հարցում Հայաստանը ստիպված է պայքարել միաժամանակ երկու ճակատում՝ հայ-թուրքական և հայ-աղբյուրական: «Արտաքննապես կարծես թե աղբյուրականների կողմից է ավելի սուր, ավելի հիստորիկ դրսևորումներով և շատ մեծ ծավալներով: Լինում է օրվա մեջ 3-4 ապատեղեկատվություն ու մեղադրանքներ են տարածում: Թուրքիայի պարագայում դա շատ ավելի նուրբ է արվում», - նկատում է փորձագետ Կարեն Վրթաճեսյանը և հավելում, որ թեև թուրքերն էլ երբեմն կոպիտ քաղաքականություն են վարում, բայց շատ բան հենց աղբյուրականների ձեռքով են անում: Թուրքերը վաղուց արդեն սովորել են, որ շատ ավելի արդյունավետ է աշխատել ոչ թե թուրքի, այլ եվրոպացու, ամերիկացու անունից: Երբեք այլազգի անցանկողների լայն ցանց ունեն, որոնց, պարզ է, լավ վճարում են: Ու շատ հաճախ հայերի հանդեպ քննադատությունը ուրիշ ազգերից է հնչում: Թեև այդ մարդիկ թուրքերի վարձկաններն են, բայց շատերիս սկսում է թվալ, թե ողջ աշխարհը մեր դեմ է:³

Մեր կարծիքով, այս հարցում աղբյուրականների գործողությունները այս պահին դեռևս մի փոքր ավելի պարզունակ են, մինչդեռ թուրքերի մոտ նույնիսկ ինստիտուտներ կան, որոնք նախապես պլանավորում են տեղեկատվական հոսքերը և շատ ավելի խոշորներն են գործում: Իրենք ձգտում են կեղծել սեփական պատմությունը, անել այնպես, որ հետադարձ ճանապարհ չլինի: Եվ դա անում են բարձր մակարդակով, գիտականորեն մշակված: «Ավելորդ» փաստաթղթերը ոչնչացվում են, իսկ նրանք, որոնք կարելի է մի քիչ էլ ձևախեղել, արժևուրել ի նպաստ իրենց, մղում են առաջին պլան:

Փորձագետների կարծիքով, այժմ բավականաչափ տարածված է տեղեկատվական պատերազմի ներքին տեսակը, երբ պատերազմում են իշխանություններն ու ընդդիմությունը, մրցող քաղաքական ուժերը, գործարարները կամ տնտեսվարող սուբյեկտները: Այդպես, 2008թ. մարտի 1-ի հայտնի իրադարձություններից հետո հենց Հայաստանի Հանրապետության իշխանությունները հայտարարեցին 20-օրյա արտակարգ դրություն, ինչից հետևանքով առաջացավ տեղեկատվական վակուում:

³ ArmenianHouse.org էլեկտրոնային գաղափարնի տնօրեն, փորձագետ Կարեն Վրթաճեսյանի հետ ունեցած հարցազրույցից: Գեղինակի անձնական արխիվ:

Տեղեկատվական պատերազմների մյուս տեսակը՝ արտաքինը, մղվում է տարբեր պետությունների, երկրների միջև: Նպատակն է՝ փոխել ժողովուրդների հոգեբանությունը, աշխարհայացքը, արժեքային համակարգը, կողմնորոշել ցանկալի ուղղությամբ, խախտել տվյալ երկրի ներքին միասնականությունը, ի վերջո ջլատել և թուլացնել տեղեկատվական հակառակորդին՝ հեռահար նպատակին հասնելու համար: Հեռահար նպատակ կարող է լինել իրական պատերազմում հաղթանակը: Այս դեպքում, ինչպես տեսանք, հայաստանյան իշխանությունների կողմից կիրառված ներքին տեղեկատվական պատերազմը հեշտությամբ հարմար միջոց դարձավ արտաքին տեղեկատվական հարձակման կազմակերպման համար: Աղբրեջանական կողմը Հայաստանում կատարվող իրադարձություններն ու իշխանությունների արձագանքն օգտագործեց որպես հակառակորդի վրա տեղեկատվական հարձակման հիանալի առիթ: Եշտեք, որ մարտի 4-ին ստեղծված ծանր ներքաղաքական իրավիճակի օրերին դարաբաղյան հակամարտության գոտում աղբրեջանական կողմից գրանցվեց զինադադարի ռեժիմի հերթական խախտումը. աղբրեջանական կողմից կրակահերթեր արձակվեցին դարաբաղյան դիրքերի ուղղությամբ:

Ի՞նչ է «տեղեկատվական դարաշրջանը»

Տեխնոլոգիական հեղափոխության հետևանքով մասնագիտական ոլորտ ներմուծվեց «տեղեկատվական դարաշրջան» եզրույթը: Տեղեկատվական տեխնոլոգիաները և համացանցի նորանոր հնարավորությունները դարձել են նոր աշխարհի առաջընթացի չափման խորհրդանիշ: «Ներկայումս պետության ներուժը գնահատվում է տեղեկատվական ներուժով, ավելի շուտ ինտերնետին միացած համակարգիչների քանակով, քան քեզ գործարաններով և դրանց թողարկած արտադրանքով»:⁴ Տեսաբանների այս դիտարկումից մի քանի տարի անց կատարելագործված տեղեկատվական տեխնոլոգիաներն ու դրանց հնարավորությունները դարձել են ոչ միայն պետությունների զարգացման «չափման միավոր», այլև նույն պետության համար նաև ժամանակակից մարտահրավեր:

Մշակումներն այս ոլորտում շարունակվում են, և ներկայումս գործնական հարթություն է տեղափոխվել երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի պատերազմը դիտվում էր որպես պատերազմի ավանդական միջոցների կարևոր բարդղրանա /միջուկային/, կենսաբանական և այլնի շարքում/, ապա երկրորդ սերնդինը կարող է հանդես գալ լիովին ինքնուրույն կերպով: Ի թիվս այն խնդիր-

ների, որոնք ենթադրվում է լուծել այդ տիպի տեղեկատվական պատերազմների միջոցով, առանձնացնենք հետևյալները.

- բարոյագուրև, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,
- քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա, սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում:

Ինչպես նկատում ենք, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներում կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները, որոնք իրենց արտացոլումն են գտել անցյալի և ներկայիս «գուճավոր» հեղափոխություններում: Նույնիսկ կարելի է պնդել, որ վերջին տիպի հեղափոխությունները երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների դասական օրինակներ են, երբ առանց ավանդական պատերազմներին բնորոշ ռազմական գործողությունների դիմելու՝ ներագող կողմը լուծում է իր առջև դրված աշխարհաքաղաքական-աշխարհագաղափարախոսական խնդիրներ:

Ժամանակակից փուլում արդի մարտահրավերներին դիմակայելու և տեղեկատվական դաշտի իրավական գործունեությունը կանոնակարգելու համար Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Ազգային անվտանգության հայեցակարգ, որտեղ բավականին տեղ է հատկացրել արտաքին տեղեկատվական սպառնալիքների դիմագրավմանը: Իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգում ներկայացված են այն տեղեկատվական սպառնալիքների ցանցը և հիմնական ուղղությունները, որոնց կանխումը և չեզոքացումը մեր պետության համար ունի ռազմավարական կարևոր նշանակություն:

Այժմ առավել հաճախ են օգտագործվում «Տեղեկատվական դարաշրջան», «Տեղեկատվական պատերազմներ», «Տեղեկատվական անվտանգություն» և նման եզրույթներ, սակայն դեռևս բացակայում են նման եզրույթների բնութագրումները, ինչպես գիտական, այնպես էլ իրավական տեսանկյունից: Տեղեկատվական համակարգերը ներխուժել են մեր կյանք և արձատականորեն փոխել այն: Տեղեկատվական դարաշրջանը փոխել է նույնիսկ ռազմական գործողություններն ու պատերազմները վարելու ձևերն ու ուղիները: Հիմա գործարանամատարները շատ ավելի հզոր տեղեկատվություն են տիրապետում և կարողանում են ավելի ճշգրտորեն կանխատեսել հակառակորդի գործողությունները. նաև վերլուծել և ճիշտ կազ-

⁴ Панарин И.Н., Панарина Л.Г., Информационная война и мир. - М., 2003. - С. 248.

մակերպել սեփական գործողությունները: Պետք է տարբերել տեղեկատվական դարաշրջանի պատերազմներն ու տեղեկատվական պատերազմները: Առաջին դեպքում պատերազմական գործողությունների ընթացքում գործնական են տեղեկատվական տեխնոլոգիաները, որպես պատերազմ վարելու միջոց, իսկ երկրորդ դեպքում պատերազմը դիտարկում է տեղեկատվությունը, որպես առանձին օբյեկտ կամ հավանական զինատեսակ և ցանկալի նպատակ:⁵

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական միջավայրի անվտանգության խնդիրներին սկսեցին անդրադառնալ անցյալ դարի վերջին տասնամյակում, որն իր հետագա զարգացումը գտավ արդեն քսանմեկերորդ դարի սկզբում: ՀՀ-ում տեղեկատվության անվտանգության խնդիրներ ծագեցին հիմնականում Ադրբեջանի, այնուհետև՝ Թուրքիայի անսքող և քչնամաբար տրամադրված քարոզչամեքենայի ամենօրյա հարձակումների հետևանքով, որոնք, վերջիվերջո, հանգեցրին տեղեկատվական պատերազմի հարևան պետությունների հետ: Եթե սկզբնական շրջանում՝ 1991-2000թթ., Հայաստանի Հանրապետությունը տեղեկատվական պատերազմ էր մղում հիմնականում էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներով՝ հեռուստատեսություն, ռադիո, լրատվական գործակալություններ, ապա հասնացանցի զարգացմանը զուգահեռ այն աստիճանաբար տեղափոխվեց վիրտուալ տարածություն՝ ընդգրկելով տեղեկատվական նորահայտ բոլոր միջոցները:⁶

Գրականություն. (1), (4), (5), (14), (16), (19), (21), (24):

Պատ 4 (2 ժամ սեմինար պարապմունք) ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- տեղեկատվական պատերազմների ժամանակակից փուլը
- տեղեկատվական պատերազմների տեսակները
- տեղեկատվական դարաշրջան

⁵ **Нерсисян В. Э.**, Основные угрозы в сфере информационной безопасности Российской Федерации.- М., 1995; **Феокистов Г. Г.**, Информационная безопасность общества // Социально-политический журнал.- М., 1996. - N5; **Панарин И.Н.**, Информационно-психологическое обеспечение национальной безопасности России.- М., 1997; **Почепцов Г. Г.**, Информационно-психологическая война.- М., 1999; **Прокофьев В. Ф.**, Тайное оружие информационной войны.- М., 1999; **Кара-Мурза С. Г.**, Манипуляция сознанием.- М., 2001; **Почепцов Г.Г.**, Информационные войны.- М., 2002; **Почепцов Г.Г.**, Психологическая война.- М., 2002; **Панарин И.Н.**, Технология информационной войны.- М., 2003; **Волковский Н. Л.**, История информационных войн.- СПб., 2003.

⁶ **Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ**, Երևան, 2008:

Պատ 5-6 (4 ժամ դասախոսություն)

Թեմա 2

Ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանումը հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմում

Ղարաբաղյան հիմնախնդրի նախապատմությունը: Ղարաբաղյան հիմնախնդիրը ԽՍՀՄ-ի փլուզման վերջին տարիներին: Հայաստանյան ՋՄԱ-ների Ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանման համապատկերում:

Տեղեկատվական պատերազմը հայաստանյան ՋՄԱ-ների դուռը թակեց ավելի շուտ, քան մեր երկիրը անկախություն հռչակեց: 1988-ի դեպքերը ստիպեցին այն ժամանակ դեռ Խորհրդային Հայաստանի ՋՄԱ-ներին արագորեն քարոզչական մարտադաշտ մղվել և, ինչպես դա հաճախ է պատահում իրական պատերազմներում, հընթացս ճանաչել տեղեկատվական պատերազմի ռազմավարությունն ու նրբությունները:

Տարիներ շարունակ ԼՂԻՄ-ում Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող հակահայկական քաղաքականությունը նպատակ ուներ մարզը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության օրինակով, լիովին հայաթափել ու բնակեցնել ադրբեջանցիներով: Չնայած արցախահայությունը Ադրբեջանի պետականակերտ ժողովուրդներից մեկն էր և իր ուրյուն տեղ ուներ այդ երկրի կայացման գործում, այնուամենայնիվ, ադրբեջանական իշխանությունների կողմից համակարգված և տևականորեն ոտնահարված էին մարզի հայ բնակչության իրավունքները, շահերն ու արժանապատվությունը:⁷

1988թ. և հետագա տարիները ցույց տվեցին, որ ԽՍՀՄ զենազույն իշխանությունները, Ս. Գորբաչովի գլխավորությամբ, մտադիր չեն սկսելու քային լուծում տալ Արցախյան հիմնախնդրին: Կիսատ-պռատ որոշումներն ավելի շատ նպաստում էին լարվածության պահպանմանը, քան այն կարգավորելուն: «Սումգայիթեր»-ի մեղավորներին հերոսացնելու պետական քաղաքականության արդյունքում էր, որ հետագայում Ադրբեջանը տվեց Ռամիլ Սաֆարովի պես «ցեղասպան հերոսներ»:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների նստաշրջանը ընդունեց «Հոչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին», որն ամրագրվեց դեկտեմբերի 10-ին միջազգային դիտորդների ներկայությամբ անցկացված հանրաքվեով, երբ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը քվեարկեց հօգուտ անկախության: 1992թ. մայիսին ԼՂՀ ինք-

⁷ **Մանասյան Ա.**, Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա տեղի ունեցել // Երևան, 2010, էջ 35:

նապաշտպանության ուժերը կարողացան ազատագրել Շուշի քաղաքը, միջանցք «բացել» Լաչին քաղաքի շրջանում՝ հնարավորություն ստեղծելով վերամիավորելու ԼՂՀ և Հայաստանի տարածքները, դրանով իսկ մասնակիորեն վերացնելով ԼՂՀ երկարամյա շրջափակումը:

1994թ. մայիսի 5-ին Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջխորհրդարանական ժողովի միջնորդությամբ Բիշքեկում Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի պատվիրակությունների ներկայացուցիչները ստորագրեցին Բիշքեկյան արժանագրությունը, որի հիման վրա մայիսի 12-ին կողմերը պայմանավորվեցին կրակի դադարեցման շուրջ, որը գործում է այսօր:

Հիմնական միջնորդական առաքելությունը ստանձնեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեն (ԵԱՀԿ): 1992թ. դարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի շրջանակներում իրականացվում է բանակցային գործընթաց. այն կոչված է հասնելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական որոշմանը:

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե ֆակտո անկախ պետություն է, որն ունի պետական իշխանության և կառավարման բոլոր անհրաժեշտ մարմինները:

Արդեն շուրջ 22 տարի է, ինչ ԵԱՀԿ Մինսկի խումբը հսկայական աշխատանք է իրականացնում զինադադարի պահպանման և հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Չնայած Ադրբեջանի կողմից պարբերաբար հնչող ռազմատենչ հայտարարություններին, թե Հայաստանը զավթել է ադրբեջանական հողերի 20%-ը և դրանով խախտում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, կողմերը հակամարտության գոտում պահպանում են հրադադարը՝ առանց միջազգային խաղաղապահ զորքերի մասնակցության: Բացի այդ՝ 2001թ. հունվարին դառնալով Եվրոխորհրդի անդամ, Հայաստանն ու Ադրբեջանը պարտավորվել են զերծ մնալ միմյանց դեմ զինված գործողություններ ձեռնարկելուց և ռազմատենչ հայտարարություններ տարածելուց:

Թեմա 3

Ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանումը հայ և ադրբեջանական լրատվական գործակալությունների կողմից

Ոչ պետական լրատվական գործակալությունների հիմնադրումը ՀՀ-ում: Նորաստեղծ լրատվական գործակալությունների վարած քաղաքականությունը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համապատկերում: Ադրբեջանական լրատվական գործակալությունների անդրադարձը Ղարաբաղյան հիմնախնդրին: Ադրբեջանի լրատվական գործակալությունների հակահայկական թեզիսները:

Ղարաբաղյան հակամարտության թեմայի լուսաբանման հետ կապված մոտեցումները, հատկապես լրատվական գործակալություններում և համացանցային լրատվամիջոցներում, համարում ենք մեր տեղեկատվական դաշտի առաջնային խնդիրներից մեկը: ՋԼՄ-ների այս տարատեսակն օժտված է առավել արագ և օպերատիվ պշխատելու հատկանիշով, ուստի այսօր այս օղակներն են առաջինը տեղեկատվություն տրամադրում հակամարտության, բանակցային գործընթացների և կոնֆլիկտի կարգավորման վերաբերյալ: Այսօր տեխնիկական հնարավորությունների կիրառմամբ այս գործակալություններն են ասպիտակում այլ ՋԼՄ-ներին թեմային առնչվող տեղեկատվությամբ, հետևաբար, մասամբ նաև նրանց գործունեությամբ է պայմանավորված մեր հանրապետությունում և միջազգային ասպարեզում այս խնդրի զարգացումների և կոնֆլիկտի արդարացի լուծման հետ կապված հեռանկարների շուրջ ձևավորվող պատկերացումները: Հաշվի առնելով նաև Ադրբեջանի կողմից լայնորեն տարվող հակահայկական քարոզչությունը՝ ու տարբեր օղակներով տարածվող ապատեղեկատվությունը՝ այս խնդրի օբյեկտիվ լուսաբանման տեսանկյունից մեր համացանցային ՋԼՄ-ների և լրատվական գործակալությունների գործունեությունը առավել նշանակալից է դառնում:

Ի դեպ, Ղարաբաղյան խնդրի կարգավորման վերաբերյալ տեսակետի կարծրացմանը զուգահեռ Ադրբեջանում աճել է բացարձակ վերահսկողությունը ՋԼՄ-ների նկատմամբ: Ավելին՝ Ադրբեջանն այսօր հսկայական գույնարներ է ծախսում արտաքին քարոզչությունն էլ ավելի ակտիվացնելու և տեղեկատվական պատերազմում հաղթանակելու, համաշխարհային հանրության կարծիքը իր օգտին ձևավորելու ուղղությամբ: Եվ որոշ դեպքերում ադրբեջանցիներին դա հաջողվում է:

Սեկ հանգամանք ևս. ինչպես հայտնի է, լրատվական գործակալությունների և կայքերի առանձնահատկություններից մեկն է տեղեկատվական

մեծ հոսքերի հետ աշխատելու, դրանք ճիշտ ուղղությամբ վերահասցեագրելու պարտականությունն է:⁸ Կարելի է ասել, որ որոշակի պարբերականությանը դասական և ցանցային գործակալությունները գործ են ունենում ոչ թե լրատվական հոսքերի, այլ ջրհեղեղի հետ. տեղեկատվությունը այնքան արագ է զալիս և կուտակվում, որ դրա մի մասը այդպես էլ չի ենթարկվում համապատասխան մշակման և վերահասցեագրվում է հաճախորդներին: Նման դեպքերից է, որ կարող է և հաճախ օգտվում է հակառակորդը:

Մեր հանրապետության լրատվական գործակալություններից Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ տեղեկատվական հակամարտության թեման առավել ակտիվ են լուսաբանել «Արմենպրես», «Սմարք» (այժմ «Արմինֆո»), «Նոյան Տապան», «Մեդիամաքս» լրատվական գործակալությունները: Ինտերնետում գործող միջոցներից կարելի է առանձնացնել PanArmenian.net, News.am, Tert.am, Panorama.am լրատվական կայքերը:

Նկատի ունենալով օպերատիվ լրատվություն հաղորդելու այս գործակալությունների գործունեության կարողությունը և նյութի մատուցման մասնագիտական առանձնահատկությունները պետք է նշենք, որ այդ գործակալությունները, բացառությամբ «Արմենպրես»-ի, ստեղծվել են Ղարաբաղյան հակամարտությունը օպերատիվ լուսաբանելու նպատակով:

Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ տեղեկատվական հակամարտությունում կողմերի դիրքորոշումները ավելի հստակ և ցայտուն դարձնելու համար նպատակահարմար գտանք անդրադառնալ նաև աղբյուրական ճանաչված մի շարք համացանցային գործակալությունների՝ Day.az, Trend.az, Apa.az, 1news.az, աշխատանքին, որոնք մեծ ազդեցություն ունեն իրենց պետության հասարակական կարծիքի վրա և տեղեկատվության հիմնական «պարտահանողներն» են: Վերջ նշված աղբյուրեանական համացանցային գործակալություններն իրենց օրվա լրահոսում Հայաստանի և հատկապես Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ տասնյակ նյութեր են տպագրում: Նրանք սևեռում են հետևում և ԳՂԳ-ում և ԼԳԳ-ում կատարվող բոլոր իրադարձություններին, նույնիսկ նրանց, որոնց անգամ մեր լրատվամիջոցներն առանձնահատուկ ուշադրություն չեն դարձրել:

Բացի իրադարձային նյութերից, այստեղ պատրաստվում են նաև հեղինակային նյութեր, որոնք աչքի են ընկնում իրենց հակահայկական մտնցումներով: Այսպես՝ նյութերից մեկում հեղինակը գրում է. «...Հավատարմացնում են ձեզ՝ հայերի համար ամեն ինչ կարող էր ավելի վատ լինել. օրինակ, Աղբյուրը կարող էր պահանջել վերադարձնել վաղըջական ժամա-

⁸ Գործակալությունների համատուր բնույթագրերը ներկայացնելիս օգտվել ենք նաև հիշատակված գործակալությունների ինտերնետային կայքերից:

ճակներից իրեն պատկանող տարածքները, ներառյալ Գեյշա-գյուղը, որն այսօր հայերն անվանում են Սևան, ինչպես նաև Երևանը, որն այժմ Հայաստանի մայրաքաղաքն է: Բայց մենք առ չենք անում՝ պահանջելով միայն վերադարձնել Հայաստանի կողմից օկուպացված Լեռնային Ղարաբաղը: Հայերը պետք է հասկանան և գնահատեն սա»:⁹

Այս «առասպել-հոդվածում» ակնհայտ երևում է աղբյուրեանցիների ազգային խառնվածքի «ամենակեր» մոդելը, որը հաճախ է դրսևորվում նրանց կատարած տեղեկատվական հարձակումներում: Նրանք ժամանակ առ ժամանակ օգտագործում են նաև այլ բնույթի առասպելներ: Իմիջիայլոց, այդ «առասպելներից» հաճախակի է օգտվում նաև այդ երկրի նախագահը, որը պատեհ կամ անպատեհ, տարբեր տիպի և կարգի պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ սկսում է բարձրածայնել աղբյուրեանական վաղըջական հողերի և այն զավթած «եկվոր» հայերի մասին:

Աղբյուրեանցի կեղծարարներին լուրջ հակահարված տալու համար մեծածավալ աշխատանքներ են տանում ՀՀ նախագահի աշխատակազմին կից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը», ինչպես նաև ԵՊՀ Հայագիտական ուսումնասիրությունների վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժինը:

Հակահայկական հիստերիան «արդյունավետ և նպատակային» կազմակերպելու համար աղբյուրեանական լրատվամիջոցների համար ոչ միայն ընդունելի չէ տպագիր և հեռարձակվող նյութերի օբյեկտիվ մատուցումը, այլև ներկայացվող աղբյուրների ստուգման անհրաժեշտությունը:

Իսկ աղբյուրեանական լրատվական գործակալությունների կողմից առավել հաճախ առաջարկվող հակահայկական բեթիներից են «Խոնջալուի կեղծ ցեղասպանությունը»: Աղբյուրեանցի լրագրողներն ուղղակի առիթ բաց չեն թողնում անհեթեթ հանցագործություններ փաթաթել մեր պարամոցին, դա էլ բավական չէ՝ մեղադրանքներ շարձալվում են չզիտես որտեղից վերցված «փաստերով», պատմական տվյալներով: Այնինչ, աղբյուրեանցի լրագրողները պետք է ուշադիր ուսումնասիրեն իրենց պատմության այդ էջերը՝ մեջբերումներ անելով այն ժամանակվա նախագահ Այազ Մութալի-բուլի հարցազրույցներից, նախագահի անձնական լուսանկարիչ Չիմզիզ Մուսաթաֆաևի լուսանկարներից ու պատմածներից, կամ էլ չէին լրագրողուհի Բ. Մազալովայի հրապարակումներից: Սակայն աղբյուրեանցիները հասարակությունը չի հանդուրժում այդ ողբերգության իրական պատկերի ներկայացումը անգամ աղբյուրեանցի լրագրողի վկայությամբ: Հանրապետութ-

⁹ «Հայաստանի համար ամեն ինչ կարող էր ավելի վատ լինել» // www.day.az, 2009, 31 հունիսի:

յունուն ճանաչված «Իրական Աղբյուր» թերթի գլխավոր խմբագիր է. Ֆաթուլանը, ցանկանալով խոջալուի մասին ողջ ճշմարտությունը պատմել իր ընթերցողներին, համարձակվել էր լրագրողական անկախ հետաքննություն անցկացնել որբերության վայրերում՝ հանգելով այն եզրակացության, որ, եթե հնարավոր է եղել անասուններին ապահով տարհանել խոջալուից, ինչու սկզբուն մարդկանց չեն տարհանել: Անգամ այս անմեղ վերլուծականի պատճառով ճանաչված լրագրողը դատապարտվեց տասնհինգ տարվա ազատազրկման և մինչև այժմ իր «պատիժը» կրում է աղբյուրանական բանտում:

«Խոջալուի կեղծ ցեղասպանությունը» բացահայտող ու մերկացնող հայկական www.xocali.net կայքի շնորհանդեսից հետո աղբյուրանական ինտերնետային լրատվական ռեսուրսները ողողվեցին «խոջալուական նոր տարափոլ»։ Հայկական կողմից արված տեղեկատվական այս հարձակումը, միանշանակ կարող ենք ասել, հաջողված էր:

Գրականություն. (1), (2),(3), (4),(13), (15),(22), (26):

Պայ 7 (2 ժամ սեմինար պարապմունք) ՔՆԱՆՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանումը հայ-աղբյուրանական տեղեկատվական պատերազմում
- Լրատվական գործակալությունների դերը հայ-աղբյուրանական պատերազմում
- Աղբյուրանական լրատվամիջոցների հակահայկական թեզիսները

Պայ 8-9 (4 ժամ դասախոսություն) Թեմա 4

Հայ-աղբյուրանական կիբեռպատերազմներ

Ի՞նչ է կիբեռպատերազմը: Հակառակորդի համացանցային կայքերի և ռեսուրսների ոչնչացումը, վիրտուալ պատերազմի ռազմավարությունը: Հակառակորդի համացանցային կայքերի և ռեսուրսների փոխարինումը սեփականներով: Ցանցային «հաքերները»: Համակարգչային վարակները և դրանց կիրառումը կիբեռթշանմու դեմ: Հայ-աղբյուրանական կիբեռպատերազմների առանձնահատկություններն ու դրսևորումները:

Կիբեռպատերազմը ժամանակակից ցանկացած տեղեկատվական պատերազմի բաղկացուցիչ մասն է: Մասնագետները կիբեռպատերազմ են անվանում համաշխարհային ցանցում պայքարի այն տեսակը, որը միտված է վիրտուալ կամ իրական թշնամու ինտերնետ ռեսուրսի կամ տեղե-

կատվական բազայի ոչնչացմանը: Կիբեռահաբեկչության ամենագանգվածային դրսևորումը ինտերնետային կայքեր կոտրելն է, դրանց բովանդակությունը ցեցելը և փոխարեղ սեփական լուղուցճներ և կոչեր գետնղելը: Սակայն կիբեռպատերազմը կարող է ունենալ նաև այլ դրսևորումներ՝ վիրուսի միջոցով հակառակորդի համակարգչի կամ ցանցի վերահսկում և տվյալների ոչնչացում, հակառակորդի տեղեկատվական դաշտում ՉԼՍ-ների հիմնում և գործածում, հատուկ ծրագրերի միջոցով էլեկտրոնային փոստի և ողջ մամակագրության դիտում, անհրաժեշտության դեպքում այդ հասցեից կեղծ մամակների ուղարկում, կայքերի բովանդակության փոխարինում, ապատեղեկացում և այլն: Համաշխարհային կիբեռարածությունում գերիշխող և թելադրող դերում են հանդես գալիս ԱՄՆ-ը, Չինաստանը և Իսրայելը, որոնք արդեն ձևավորել են մեծաքանակ կիբեռգործեր, դրանք ամեն վայրկյան պատրաստ են պատերազմել ցանկացած երկրի հետ՝ ցանկացած ժամանակ:¹⁰

Մեր տարածաշրջանում կիբեռպատերազմները լայն տարածում գտան համացանցի զարգացմանն ու տարածմանը զուգահեռ: Չնայած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դանդաղ տեմպերին, այժմամենայնիվ, կիբեռպատերազմը Հայաստանի և Աղբյուրանի միջև բավականին ակտիվ փուլ մտավ արդեն երրորդ հազարամյակի շեմին: Հարավկովկասյան երկու անկախ պետությունների միջև ծավալված կիբեռպատերազմը պայմանակորեն կարելի է բաժանել երկու մասի.

1991-2000թթ., երբ կիբեռպատերազմը հիմնականում մղվում էր անհատ հաքերների կամ դեռևս ձևավորման փուլում գտնվող փոքրաթիվ կազմակերպությունների կողմից, որը կարելի է կոչել նաև պասիվ փուլ, և 2000 թ-ից մինչև մեր օրերը, երբ ձևավորվեցին կիբեռպատերազմ մղող խմբավորումներ, որոնց զգալի մասը հովանավորվում և վերահսկվում է պետական կառույցների կողմից, ինչպես դա տեղի է ունենում Աղբյուրանում: Այս փուլը, ի տարբերություն առաջինի, կարելի է կոչել ակտիվ փուլ:

Երրորդ հազարամյակի շեմին իսկական կիբեռպատերազմ ծավալվեց Հայաստանի և Աղբյուրանի միջև, որը, ըստ ռուս տեսաբանների՝ աշխարհում առաջին կիբեռպատերազմն էր երկու անկախ պետությունների միջև: Աղբյուրանական հաքերները, որոնք մերկայացնում էին «The Green Revenge and Hijak Teams» խմբերը, սկսեցին շարքից հանել մի շարք հայկական կայքերը:

Բնագրով է՝ հայկական հաքերների պատասխանը չուլացավ. The Liazor Group խմբի հայ հաքերները կազմակերպեցին պատասխան գործո-

¹⁰ Черненко Е., США начали всевозв готовиться к кибервойне, а Россия все еще надеется договориться по-мирному // Русский Newsweek. - 2010, 20 сентября. - С. 39.

ղություն» իրենց վերահսկողության տակ վերցնելով երկու տասնյակ աղբեջանական խոշորագույն կայքէջեր: Սհա մի քանի աղբեջանական էջերի հասցեներ, որոնք բավականին երկար ժամանակ չէին պատկանում իրենց տերերին՝ Azerbaijanis-congress.com, Baku-vision.com, Azerbaijan-online.com, Azdata.net, Azerbaijantv.com, Baku.net:

Վերը նշված կայքերը բացելու բոլոր փորձերը բերում էին «Don't trouble trouble, until trouble troubles you» վերնագիրը կրող էջ: «Liazor Group» անվան ներքո բացնված հայ հաքերների խումբը նաև հատուկ երախտագիտություն էր հայտնել «The Green Revenge» և «Hijak Teams» աղբեջանական խմբերին՝ «Ճախագիծը խթանելու համար»:

Հայ հաքերները ոչ միայն խափանեցին այդ կայքէջերի գործունեությունը, այլև բովանդակային փոփոխության ենթարկեցին դրանք: Այսպես, «Լիազոր խմբի» անդամները «չհայտարարված» կիբեռպատերազմում իրականացրին տեղեկատվական դիվերսիոն գործողություն: Պատրաստվելով «մարտական գործողությունների»՝ հայ հաքերները ստեղծեցին աղբեջանական ճանաչված «Ձերկալո» թերթի ինտերնետային տարբերակի կրկնօրինակը: Կրկնօրինակի միջոցով հայ հաքերները թերթի լրատվական ժապավենի վրա ավելացրին «սեփական» տեղեկատվություններ, որոնք ստորագրված էին թերթի առաջատար լրագրողների անունից: «Տեղեկատվության» թեմատիկան լիովին համապատասխանում էր տվյալ ժամանակի իրադարձությունների ոգուն և խմբագրության որոշեգրած տեղեկատվական քաղաքականությանը: «Ձերկալո» կայքէջի ընթերցողները, այցելելով www.zerkalo-daily.com էջ, բնականաբար, չէին կարող պատկերացնել, որ կարդում են թերթի՝ լիազորականների կողմից պատրաստված տարբերակ և հասկանալի պատճառներով խուճապահար էին լինում: Հայ հաքերների պատրաստած հոդվածում, հղում անելով Աղբեջանի Միլի-մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռզա Իբատովին, հաստատվում էր, որ Աղբեջանը իբր պատրաստ է տարածքային փոխառնակում կատարել Հայաստանի հետ: Այդ տեղեկատվական «խայծը» կուլ տվեց նաև հայկական «Անարթ» լրատվական գործակալությունը, որը, վկայակոչելով «Ձերկալո» թերթը, տեղեկատվությունը տարածեց ողջ աշխարհում: Աղբեջանական ՋԼՄ-ներն ուշացումով հասկանալով տեղի ունեցածը՝ փորձեցին հերքել այդ տեղեկատվությունը, սակայն նրանց ջշերն էին ուշադրություն դարձնում: Այստեղ հարկ է հիշել , որ աղբեջանացի կիբեռահաքելիչների հիմնական թիրախ են հանդիսանում պետական հիմնարկների և գերատեսչությունների կայքերը: Աղբեջանական կողմի վարած տեղեկատվական պատերազմը մեծամասամբ կառուցվում է առասպելաբանության հիմքի վրա: Հաճախ այդ բարձրագույն առասպելաբանությունը նույնիսկ կարողանում է համոզիչ ու իրական թվալ գոնե միջազգային հանրության

աչքին: Մի քանի տարի առաջ աղբեջանական Գուբա կոչվող քաղաքում ինչ-որ շինարարական աշխատանք իրականացնելիս հայտնաբերվում են գանգեր: Աղբեջանցիները, գանգերի վերաբերյալ մի քանի վարկածներ առաջ քաշելուց հետո, ի վերջո կանգ են առնում հետևյալ վարկածի վրա. դրանք աղբեջանացի խաղող բնակիչների գանգեր են: Այս «հայտնագործումից» հետո աղբեջանցիները շարունակում են առասպելը՝ դրանք 1918թ. հայերի իրականացրած աղբեջանական ցեղասպանության զոհ դարձածների մնացորդներն են: Թե որտեղի՞ց «աղբեջանական պատմության արյունոտ և դաժան այս էջը» հորինվեց, անհասկանալի է, բայց աղբեջանցիները հատուկ պատմաբանների խումբ են կազմում՝ «փաստը» հետաքննելու համար, գիտաժողով իրավիրում, գրքեր տպագրում, իսկ հիմա էլ նույնիսկ մտադրություն ունեն այդ տեղում կառուցելու աղբեջանական ցեղասպանության թանգարան Աղբեջանում հակահայկական բուռն ակցիաների մեծ մասը կազմակերպվում և ֆինանսավորվում է Հ. Ալիևի անվան հիմնադրամի կողմից, որը ղեկավարում և անձամբ համակարգում է առաջին տիկին Մ. Ալիևան:

Պետք է նշել, որ և Հայաստանը, և՛ Աղբեջանը միացել են կիբեռահանցագործության դեմ պայքարի միջազգային կոնվենցիային: Ժամանակակից փուլում կիբեռպատերազմներն այնպիսի մեծ չափերի են հասել, որ աշխարհի շատ պետություններ դրանց դեմ փորձում են պայքարել ոչ միայն ներքին օրենսդրությամբ, այլև ընդունված միջազգային փաստաթղթերով, որոնց շուրջ միավորվում են խնդրով մտահոգված շատ երկրներ և միասին փորձում պայքարել կիբեռադեղին դեմ: Քանի որ կիբեռմիջավայրը անասիմանափակ է, չկան միջպետական սահմաններ, ուստի և կիբեռպատերազմների համար չկան նման սահմաններ:

Հայաստանում կիբեռահանցագործությունները կանխարգելելու համար համապատասխան հոդվածներ են մտցվել ՀՀ Քրեական օրենսգրքում: Այդպես, 24-րդ գլխի 251-257 հոդվածները վերաբերում են հենց կիբեռահանցագործություններին: Այս խնդիրը իսկապես արդիական է Հայաստանի համար, քանի որ բուռն տեղեկատվական պատերազմների մեջ ընդգրկված ՀՀ-ն շատ հաճախ է կիբեռպատերազմների զոհ դառնում:

Այսօրվա դրությամբ կիբեռալուրտում ամենաակտիվն են Հինաստանը, Ռուսաստանը և ԱՄՆ-ը: Նոր ժամանակների առանձնահատկություններից է դարձել մանր հաքերական խմբավորումները պետական հովանու տակ վերցնելը: Կիբեռզորքերի նպատակն է ոչ միայն իրենց հովանավորյալ երկրի կիբեռարարածության պաշտպանությունը, այլ նաև կանաչակրողի կիբեռեսուրսների վնասումը, հարձակողական գործողությունների իրականացումը:

Ցանկանում ենք հնչեցնել այն գաղափարները, որոնք առաջացել են խնդրահարույց բնագավառը ուսումնասիրելիս:

1. Մեծացնել հայաստանյան հոսքից-պրովայդերների անվտանգությունը և մշտապես պահել դրանց վերահսկողության ներքո՝ պարտադրելով, որպեսզի անվտանգությանը համապատասխան ուշադրություն և միջոցներ տրամադրվեն:
2. Խստացնել հայկական դոմենային գոտում անունների գնման արարողությունը՝ պահանջելով հավելյալ տվյալներ դիմողի վերաբերյալ և ստուգելով դրանց իսկությունը:
3. ՀՀ Ազգային անվտանգության խորհրդին կից ստեղծել աշխատանքային խումբ, որում ընդգրկել շահագրգռված գերատեսչությունների մերկայացուցիչների և ոլորտի մասնագետների:
4. Տեղեկատվական անվտանգության հայեցակարգում ընդգրկել նաև կիբեռահաբեկչությանը դիմակայելու մեթոդները և միջոցները:
5. Տեղեկատվական անվտանգության մշտական միջոցառումներ իրականացնել ՀՀ պետական գերատեսչություններում և հիմնարկներում՝ հատուկ շեշտ դնելով էլեկտրոնային փոստի ֆիլտրացիայի վրա:

Ռեժմ 5

Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի համապատկեր

Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի ժամանակակից փուլը: Հայ-թուրքական արձանագրությունները տեղեկատվական պատերազմի համապատկերում: ԱՄՆ-ի Կոնգրեսի Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագծի քննարկումը հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի համատեքստում: Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի դրսևորումները Հայոց ցեղասպանության հերթական տարեկիցի ոգեկոչման օրերին:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ուղեկցվում է նոր շեշտադրումներով տեղեկատվական այն պատերազմում, որը թուրքական իշխանությունները երկար տարիներ մղում են Հայաստանի և հայ ժողովրդի դեմ: Սակայն այդ նոր ռազմավարությունն ավելի է բարդացնում թուրքական կողմի քայլերի ընկալումը, քանզի, եթե նախկինում գործ ունեինք համախ պարզունակ, մեկ քայլանոց գործիների հետ, ապա այսօր գերակայում են մի քանի քայլերից բաղկացած բարդ գործողությունները, երբ հակառակորդի իրական մտադրությունները հասկանալի են դառնում այն ժամանակ, երբ դրանց դիմակայելը և պատասխան գործողություններ ձեռնարկելն արդեն ուշ է:

Հայ-թուրքական հարաբերությունների լարված բնույթն ստեղծում է Հայաստանի ազգային անվտանգության դեմ ուղղված որոշակի սպառնալիքներ՝ խղճընդոտելով երկրի կայուն զարգացմանը: Հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ Թուրքիան իրականացնում է տարածաշրջանային նշանակություն ունեցող մի շարք տնտեսական ու տրանսպորտային ծրագրեր՝ առանց Հայաստանի մասնակցության:¹¹

Այս առումով հարկ է նշել, որ թուրքական կողմը վաղուց արդեն գերծ է մնում տեղեկատվական պարզունակ ակցիաներից, ինչպիսիք են հայկական կայքերի վնասումը, դրանց ոչնչացումը կամ բովանդակության փոփոխումը: Նման ակցիաների շուրջ աղմուկը մեծ է, իսկ արդյունավետությունը՝ չնչին: Այդ տիպի գործողությունները բնորոշ են ադրբեջանական հաքերներին, դրանք սովորաբար անհատական, ոչ համակարգված բնույթ են կրում և ուղղված են տվյալ անհատների անձնական հավակնությունների բավարարմանը: Թուրքական ձեռագիր լրջորեն տարբերվում է ադրբեջանականից: Գործողությունները մտածված են մի քանի քայլ առաջ, հստակ կազմակերպված ու համակարգված են և կառավարվում են ամմիջապես ղեկավարության կողմից: Փորձենք կանգ առնել մեկ օրինակի վրա, որը ցույց է տալիս, թե ինչպիսի մեթոդներ են կիրառում թուրքական իշխանությունները Հայաստանի հետ իրենց հարաբերությունները բացատրելու և տեղեկատվական, նաև դիվանագիտական պատերազմում շահելու նպատակով: Այս մեթոդը վաղուց արդեն հայտնի է տեղեկատվական պատերազմի մասնագետներին, հոլիվուդյան ֆիլմերում այն կոչվում է «բարի ոստիկան – ջղախին ոստիկան»: Մեր իրականության մեջ այն կարելի է վերանվանել «բարի նախագահ – ջղային վարչապետ»:

Բոլորիս հայտնի է, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը լուրջ դժգոհություն առաջացրեց Թուրքիայի բարեկամ Ադրբեջանում, ուր բողոքի ակցիաներից բացի իսկական տեղեկատվական հարձակում սկսվեց թուրքական իշխանության հասցեին: Եղբայր ժողովրդին զսպելու համար Թուրքիայի իշխանությունները խաղ նախաձեռնեցին, որի նպատակն այն էր, որ և «գայլերը կուշտ լինեն, և գառները՝ ողջ»: Այդ նպատակով նախագահ Արդուլլահ Գյուլը և վարչապետ Ռեջեփ Էրդողանը բաշխեցին դերերը, որի արդյունքում Գյուլը աշխատում էր և աշխատում է հայկական, ամերիկյան և եվրոպական «ակամցների» հետ, իսկ Էրդողանը՝ թուրքական և ադրբեջանական: Արդյունքում զրեթե միաժամանակ, բայց

¹¹ **Ռոբանջյան Հ.Ա.** Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության համատեքստում, Երևան, 2008, էջ 110:

տարբեր տեղերում ցրանք հրապարակայնորեն արտահայտում էին լիովին տարբեր, իսկ հաճախ նաև իրարամերժ մտքեր, որոնք վերաբերում էին հայ-թուրքական հարաբերությունների պայլազային:

Սկսած է նաև, որ թուրքական հասարակությունը տեղեկատվություն չի ստանում հայ-թուրքական բանակցությունների իրական ընթացքի մասին, այլ միայն որոշ դրվագներ, որոնք ընդունելի կամ հաճելի կարող են լինել թուրքական և ադրբեջանական հասարակությանը:

Չնայած դիվանագիտական բազմաքայլ կոմբինացիաներին, 2010թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում կնքվեցին Հայ-թուրքական արձանագրությունները, որին ներկա էին մեծ թվով բարձրաստիճան հյուրեր: Ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա զարգացումը, թուրքական կողմը պարզապես պատրաստ չէր արձանագրությունների վավերացմանը: Մեկ տարի տևած՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղված քայլերը տապալվեցին թուրքական կողմի պատճառով: Ավելին, այդ փաստաթղթերը տակկան ժամանակ քննարկվել են Հայաստանի և Թուրքիայի խորհրդարաններում՝ սպասելով վավերացման: Հայաստանը այդ ընթացքում դրսևորել է հետևողական մոլորվածություն հարաբերությունների կարգավորման գործընթացին: Ողջ աշխարհը մեկ անգամ ևս համոզվեց, որ հայկական կողմի դիրքորոշումն այդ հարցում կառուցողական է:

Պարզ երևում էր նաև, որ Թուրքիայի իշխանություններն ուղղորդում են իրենց վստահած լրագրողներին, ցրանք պարտադրում կատարել այնպիսի շեշտադրումներ, որոնց շնորհիվ ցրանք հանդես են գալիս դրական լույսի ներքո:

Հարաբերությունների եական փոփոխություն, իհարկե, նկատվեց, երբ Հայաստան այցելեց Թուրքիայի նախագահը:

Պետք է նշել, որ ասարիլքսամչրոյսյան իրադարձությունները թուրքերի համար պարզապես զլխացավանք են դարձել, քանի որ տարեցտարի ավելանում է ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը, աշխարհի ամենատարբեր կետերում հակաթուրքական տրամադրությունները նոր զարթոնք են ապրում, իսկ թուրքերը ստիպված են հսկայական գունարներ ծախսել՝ ինչ-որ կերպ չեզոքացնելու հայկական լրբիհնգի բոլոր այդ երևույթները: Ինչպես ամեն տարի, իրարամերժ հայտարարությունների քաղաքականությունը շարունակվում է նաև այսօր: Թուրքիայի առաջին դեմքերի հրապարակային ելույթների փորձագիտական վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ տվյալ երկրի իշխանություններն օգտագործում են տեղեկատվական պատերազմներում լայն կիրառում գտած մի քանի մեթոդներ:

1. Տեղեկատվության սահմանափակում. հասարակությունը տեղեկատվություն չի ստանում հայ-թուրքական բանակցությունների իրական ընթացքի մասին, այլ միայն որոշ դրվագներ, որոնք ընդունելի կամ հաճելի կարող են լինել թուրքական և ադրբեջանական հասարակությանը:
2. Ուղղորդում. իշխանություններն ուղղորդում են իրենց վստահած լրագրողներին, ցրանք պարտադրում կատարել այնպիսի շեշտադրումներ, որոնց շնորհիվ ցրանք հանդես են գալիս դրական լույսի ներքո:
3. Շփոթեցում. իշխանությունների տարբեր ներկայացուցիչներ հանդես են գալիս հակասական, հաճախ իրարամերժ հայտարարություններով, որոնց մի մասը նախատեսված է ներքին, մյուս մասը՝ արտաքին լսարանին հաճոյանալու համար:
4. Ապատեղեկացում. իշխանությունները ներկայացնում են հասարակությանը այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը և չեն հաստատվում որևէ այլ աղբյուրի կողմից: Խոսքը, մասնավորապես, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դարաբեռված գործընթացի հետ կապելու փորձերն են, որոնք բազմիցս հերքվել են միջազգային միջնորդների կողմից:
5. Հաճոյանալու տարբեր կողմերին հաճոյանալու, ցրանք վստահությունը շահելու համար թուրքական իշխանություններն ասում են այն, ինչ իրենցից սպասում են, սակայն այդ խոստումները միշտ չէ, որ իրականություն են դառնում:

Հայ-թուրքական հարաբերություններում նշանակալից իրադարձություն էր 200 թուրք մտավորականների նախաձեռնած ակցիան, որով հայ ժողովրդից ներողություն էին խնդրում Առաջին աշխարհամարտի տարիներին տեղ ունեցածի համար՝ այն որակելով «Մեծ աղետ»: Համացանցում տարածված «Ես ներողություն եմ խնդրում» վերնագրված հայտարարությունում, որի հեղինակները խոսափել են «ցեղասպանություն» բառը գործածելուց, մասնավորապես, ասված է. «Իմ խիղճը չի ընդունում, որ մենք անհաղորդ մնանք և ուրանանք Մեծ աղետը, որին Օսմանյան Թուրքիայի հայերը ենթարկվել են 1915 թվականին: Ես մերժում եմ այդ անարդարությունը, կհսում եմ հայ եղբայրներիս զգացմունքներն ու ցավը և ներողություն եմ խնդրում նրանցից»:¹²

¹² **Նախաձեռնողներից ոչ ոք չեղևասպանություն են քառը չի օգտագործում** // Ազգ, 2008, 6 դեկտեմբերի:

Թե իրականում ինչպես է սեփական պատմությանը նայում հայ ժողովրդի պատմական տարածքներին և մշակութային ժառանգությանը բռնությամբ տիրացած թուրք հասարակությունը, քերևս, պարզ է նույն թուրքերի հայտարարություններից ու ամհանդուրժող վերաբերմունքից Հայաստանի ու հայամետ դիրքորոշումների հանդեպ: Մի երևույթ, սակայն, շարունակական բնույթ է կրում Թուրքիայում՝ օրեցօր ավելանում են անհատները, ովքեր պնդում են Հայոց Ցեղասպանության եղելության և հայկական պնդումների ճշմարտացիության մասին: Բավական շատ են այն թուրք գիտնականներն ու պատմաբանները, որոնք դեմ են Հայաստանի նկատմամբ թուրքական իշխանությունների վարած քաղաքականությանը: Միևնույն ժամանակ հայ-ադրբեջանական հակամարտությունում Թուրքիան շարունակում է մնալ Ադրբեջանի հավատարիմ օգնականը՝ միանշանակ հասկացնելով, որ իր երկիրը երբևէ չի դադարի աջակցել Ադրբեջանին և մինչև վերջ կլինի «Սեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի հետևորդ: Չնայած դրան՝ պաշտոնական Երևանի համար հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ենթադրում է երկու հիմնական բաղադրիչ. Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատում ու սահմանի բացում: Հայ-թուրքական հարաբերությունները դեռևս մնում են հակամարտություն՝ պայմանավորված Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման, Արցախյան հակամարտության և Հայաստանի շրջափակման խնդիրներով:

Այս պարագայում պետք է ակնկալել նաև թուրքական և ադրբեջանական քարոզչամեթոդների ակտիվացում, ինչպես նաև դրանց համատեղ տեղեկատվական գործեր, որոնք ուղղված են լինելու նախ և առաջ Ցեղասպանության հերքմանը կամ այդ փաստից շեղելուն, ինչին ակամատես ենք եղել բազմիցս:

Գրականություն. (3), (4),(5), (7),(19), (23):

Պատ 10 (2 ժամ սեմինար պարապմունք) **ՔՆՆԱՐԿՎՈՐ ՀԱՐՑԵՐ**

- Հայ-ադրբեջանական կիրեռապատերազմների ժամանակակից փուլը
- Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի համապատկերը
- Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի դրսևորումները

Պատ 11-12 (4 ժամ դասախոսություն)

Թեմա 6

ՀՀ տեղեկատվական դաշտի անվտանգության ապահովման տեխնոլոգիաները

Նորագույն տեխնոլոգիաները հանրային և ազգային տեղեկատվական անվտանգության խնդիրներին ծառայելիս: Լրագրողի դերը հանրային անվտանգության համակարգում: Տեղեկատվական պատերազմ վարելու մարտավարությունը: Տեղեկատվական ներքին և արտաքին լսարաններ:

ՀՀ տեղեկատվական ոլորտի մասնագետների կարծիքով՝ հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմը սկսվել է դեռևս Ղարաբաղյան շարժման առաջին օրերին: Վերջին երկու տասնամյակների ընթացքում, Թուրքիայի և Ադրբեջանի հետ մշտապես գտնվելով տեղեկատվական հակամարտության մեջ, ՀՀ-ում անիրաժեշտություն առաջացավ ներքին և արտաքին լսարանները պաշտպանել մեր հավանունտ հարևանների տեղեկատվական հարձակումներից: Չնայած ՀՀ տեղեկատվական դաշտի անվտանգության խնդիրներով զբաղվում են ինչպես պատկան, այնպես էլ հասարակական կազմակերպություններ, սակայն միայն վերջին ժամանակներս մեզանում սկսեցին պետական մակարդակով մեծ տեղ հատկացնել «տեղեկատվական զենքի» կարևորությանն ու երկրի տեղեկատվական անվտանգությանը: ՀՀ նախագահի աշխատակազմին կից ձևավորվեց «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը: Այս կառույցի նպատակն է ՁԼՄ-ների դաշուում ուսումնասիրություններ իրականացնելը, տեղեկատվական անվտանգության, քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքի հետ կապված տարբեր խնդիրներով զբաղվելը:¹³

Տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվող և այդ հարցերը համակարգող համապատասխան մարմնի ստեղծումը պատճառ համարենք, թե պարզապես մեզանում զգոնության մակարդակի բարձրացումը, այնուամենայնիվ, վերջին շրջանում հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտության հարցում հայկական կողմից առաջխաղացում է նկատվում: Որպես օրինակ հիշենք www.xocali.net և [L73 Մարաղա հայաբնակ գյուղի ոլբերգություն](http://L73.Mարաղա.հայաբնակ.գյուղի.ոլբերգություն) մասին պատմող www.maragha.org/ կայքերը: Սա վերջին մի քանի տարիների հայկական կողմից արված ամենասարյունավետ տեղեկատվական հարձակումը կարելի է համարել:

Հայկական կողմը ուշիուշով հետևում է ադրբեջանական քարոզչամեթոդային ամենօրյա գործունեության, որի հետևանքներն երևում են ինչպես

¹³ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, Երևան, 2008:

Աղբրեջանում ու միջազգային ասպարեզում, այնպես էլ՝ Հայաստանում: Այդ ազդեցությունը արտահայտվում է աղբրեջանական քարոզչամեթոդային տերմինաբանության, թեզերի օգտագործմամբ, որոնք հայկական տեղեկատվական դաշտ են ներթափանցում նաև հայկական ՋԼՄ-ների աջակցությամբ (աղբրեջանցիների խոսքերն առանց մեկնաբանության հայերեն քարոզմանելու միջոցով):¹⁴

Հայաստանի վարած տեղեկատվական պատերազմներից առավել լուրջ պատերազմ է հայ-թուրքականը, պարզապես այս պատերազմը մեծամասամբ վարում է Սփյուռքը, ընդ որում հայ-թուրքական տեղեկատվական պատերազմում Սփյուռքը հիմնական ուշադրությունը դարձնում է Ցեղասպանության հարցին, մինչդեռ թուրքերը խելացի կերպով այս տեղեկատվական պատերազմում նաև այլ հարցեր են լուծում: Օրինակ՝ փոփոխում են հայկական տարածքների անվանումները, դրանք դարձնում թուրքական՝ իսպառ մոռացնելու համար այդ տարածքների հայկական անցյալը: Իսկ հայ-աղբրեջանականն առավել արդիական է թվում այն պատճառով, որ պարզապես այն ավելի աղմկոտ է, աղբրեջանցիները շատ են աղմկում: Աղբրեջանցիների «աղմուկը» պատճառ է դառնում, որ ոմանք կարծեն, թե այս պատերազմում մենք տանուլ ենք տալիս:

Հաշվի առնելով, որ տեղեկատվական անվտանգության նկատմամբ ուշադրությունը Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն է, նշեմք այն ոլորտները, որոնք իրական մարտահրավերներ են ներկայացնում Հայաստանի տեղեկատվական անվտանգությանը.

1. Տեղեկատվական ցանցերում պետության ներկայացված լինելու հնարավորությունները և այդ ուղղությամբ աջակցությունը ոչ պետական կառույցներին, թշնամական քարոզչությանը դիմակայելու և դրական իմիջ ձևավորելու հնարավորությունները:
2. Տեղեկատվական ինքնիշխանության հանդեպ այլ պետությունների և ցանցային խմբերի ագրեսիվ քաղաքականությանը դիմակայելու պետության կարողությունը:
3. Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարթությունում տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու երկրի ներուժը:

Բոլոր այս ոլորտները փոխկապակցված են և ենթադրում են թե պետական կենտրոնացված մոտեցում, և թե զանազան ցանցային խմբերի ներգրավվածություն, որոնք ի վիճակի են վարել ինքնուրույն քաղաքականություն տեղեկատվական դաշտում:

¹⁴ Հեղինակի 77 մակագահի աշխատակազմի Հանրային կապերի կենտրոնի փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ ունեցած հարցազրույցից: Հեղինակի անմական արխիվ:

Թեմա 7

Բլոգները տեղեկատվական պատերազմներում

Բլոգները արտակարգ դրության պայմաններում: Հայ բլոգերների գործունեությունը արտակարգ դրության պայմաններում:

Ժամանակակից փուլում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, տեղեկատվության հայթայթման գործում կարևոր դերակատարություն ունեն բլոգները: Բլոգները մեծ դեր են կատարում այսօրվա տեղեկատվական պատերազմներում: Բնմաբար կներկայացնենք բլոգների կիրառման անհրաժեշտությունը արտակարգ իրավիճակների ժամանակ, կներկայացնենք, թե ինչ ակտիվություն ցուցաբերեցին հայկական բլոգոսֆերայի ներկայացուցիչները Երևանում 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների հետևանքով հայտարարված արտակարգ դրության պայմաններում: Վերոնշյալ դեպքերը մեկ անգամ ևս հաստատեցին, որ բլոգների՝ որպես այլընտրանքային լրատվության միջոց հանդես գալու այսպես կոչված «աստղային ժամը» հենց արտակարգ իրավիճակներն են: Սա գործողությունների լայն դաշտ է բացում քաղաքացիական լրագրության ներկայացուցիչների համար, ովքեր, շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորության, սկսում են լրատվական արշավը բլոգներում, միկրոբլոգ Twitter-ում և սոցիալական այլ ցանցերում: ¹⁵

Տեղեկատվական վակուումի պայմաններում տեղեկատվության, կարծիքների փոխանակումն ու քննարկումները հնարավոր դարձան բլոգներում և սոցիալական ցանցերում: Տեղեկատվության պակասը հատկապես սրվեց այն ժամանակ, երբ մարտի 5-ին Հայաստանում արգելափակվեց www.youtube.com վիդեո կայքը, քանի որ ընդդիմությունը սկսել էր կայքում տեսադրել մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ տեսանյութեր: Այդ օրերին բլոգների երկու ճամբար կար՝ մի խումբը պաշտպանում էր առաջին մահա-ցահին, մյուս խումբը ընդդիմախոսում էր նրան: Սակայն սոցիալական ցանցերից առավել ազդեցիկ լրատվության աղբյուր դարձան բլոգները: Այդ օրերին դրանց գործունեությունն ակտիվացավ, բացվեցին նաև նորերը: Բլոգերները, հատկապես նրանք, ովքեր բլոգ ունեին Livejournal-ի հոսքիմզում, սկսեցին լայնորեն ներկայացնել մարտի 1-2-ի իրադարձությունները, տեղադրել լուսանկարներ, տեսաժապավեններ ոստիկանության և ցուցարարների բախումներից: Անհրաժեշտ է նշել, որ բլոգները նաև դարձան տեղեկատվական պատերազմի հարթակ այդ օրերին քաղաքական երկու ճամբարների բաժանված բլոգերների համար: Երրորդ, ոսկե միջին ատեսակետ

¹⁵ Մարտիրոսյան Ս., Տեղեկատվական պատերազմները բլոգերում // ժողովախոսիկ (տեսության և պատմության հարցեր), Երևան, 2009, էջ 67:

իրադարձությունների գնահատման շուրջ բլոգներում այդ օրերին գրեթե բացակայում էր: Ըստ լրագրող, բլոգեր Արթուր Պապյանի (Ditord), որի բլոգը այդ օրերին բավականին ակտիվ էր գործում, մարտի 1-2-ը և դրան հաջորդած քան օրերը կարելի է համարել հայկական բլոգային համայնքի ծաղկման շրջան: «Կարծում եմ, որ շատ բլոգներ իրենց նախածեռնած օրակարգի պայմաններում՝ հակատեր-պետությանական, ընդդիմադիր, չեզոք, իրենց լիարժեքորեն դրսևորեցին որպես բլոգներ՝ որպես սուբյեկտիվ լրատվամիջոցներ: Այդուհանդերձ, չպետք է սուռնամաք, որ լրագրողի գործառնությունը ոչ թե սուբյեկտիվ մոտեցումն է, այլ օբյեկտիվ տեղեկատվություն հաղորդելը: Այս առումով ընդամենը մեկ-երկու բլոգ էին, որ իրենց վրա վերցրին լրատվամիջոցի գործառնություն՝ հաղորդելով օբյեկտիվ տեղեկատվություն: Ընդ որում, այդ բլոգները՝ Kornelij Glas, ArmeniaNow, A1plus, Reporter_Arm, blog.oneworld.am, ditord.com, լրագրողներ էին վարում», - նկատել է Արթուր Պապյանը: Նրա կարծիքով, այդ օրերին հայկական բլոգները հսկայական դեր կատարեցին՝ բախումների վայրից լուսանկարներ, տեսանյութեր և տեղեկատվություն հաղորդելու առումով:¹⁶

Մարտինեկյան իրադարձությունները ստիպեցին մի շարք բլոգերների վերանայելու իրենց քաղաքականությունը: Ոմանք, ինչպես, օրինակ, բլոգեր, մեդիա իրավաբան Դավիթ Սանդուխչյանը իրենց բլոգում քաղաքական բեմաներով գրառումները փակ պահեցին ընթերցողների լայն շրջանակից՝ թույլատրելով այն կարդալ միայն բլոգային ընկերներին: Իր հերթին հայկական ամենաընթերցվող բլոգերներից մեկը՝ Տիգրան Քոչարյանը նշում է, որ մարտինեկյան դեպքերի ժամանակ մի պահ բլոգները դադարեցին տեղեկատվություն տարածել, քանի որ պարզ չէր՝ արտասպառ դրուսյունը տարածվում է բլոգների վրա, թե՛ ոչ: «Ես իմ բլոգում այդ ժամանակ գրեցի, որ շարունակելու եմ տեղադրել տեղեկատվություն, ինչը զարկ տվեց բոլոր մնացած բլոգներին, ինչպես ընդդիմադիր, այնպես էլ ոչ ընդդիմադիր: Բլոգներում այդ ժամանակ հետաքրքիր իրավիճակ էր ստեղծվել, հիմնականում բլոգները բաժանվում էին, և սպանակամորեն ասած, լուծական և հակալուծական բլոգների: Բուն իշխանության օգտին քարոզող բլոգներ համարյա չե կային: Ընդ որում, անվիպելու տիրույթում գերիշխում էին ընդդիմադիր բլոգները, ռուսալեզու տիրույթում՝ հակաընդդիմադիր, հայալեզու տիրույթում կողմերի հարաբերակցությունը հավասար էր: Այդ քան օրերի ընթացքում առաջացան, այսպես ասած, թրք-բլոգները, ո-

րոնք մինչև այժմ պահպանում են իրենց առաջատարությունը բլոգային համայնքում», - նշել է Տ. Քոչարյանը:¹⁷

Այդ օրերին ամենաընթերցվող բլոգներից մեկը հենց Տիգրան Քոչարյանինն էր: Այն իշխանամետ դիրքորոշում ուներ ու բավականին ակտիվ լուսաբանում էր իշխանական շրջանակների տարածած հայտարարությունները: Քննադատությունն ընդդիմության առաջնորդի հասցեին սուր էր և ուղեկցվում էր հայիոյախառն արտահայտություններով: Հատկանշական է, որ բլոգների էջում մեկնաբանություններ, լրացումներ էին անում միայն նրա գաղափարները պաշտպանող բլոգերները:

Բավական ակտիվ էին նաև ընդդիմադիր բլոգերները: Օրինակ՝ «bekaisa»-ն, Unzipped-Nazarian-ը, mk.am-ը ոչ միայն տարածում էին Լևոն Տեր-Պետրոսյանի շտաբի հայտարարությունները, նախկին նախագահի և նրա աջակիցների հարցազրույցները, այլև հետևում էին արտասահմանյան մամուլի արձագանքներին, որոնք և ներկայացնում իրենց օրագրում, նույնիսկ քարոզամաքար: Ամիջական հեղինակներին քաջքնելու համար Տեր-Պետրոսյանի աջակիցները բացեցին մի քանի խմբային բլոգներ, որոնք իրենք էլ կնքեցին «սամիզդաստներ»՝ martimek.livejournal.com: Տեղեկատվություն օբյեկտիվությունը, հավաստիությունը և բազմակարծությունը փորձում էր պահպանել Ditord.com բլոգերը: Նա տեղադրում էր իրապարհականներ ինչպես ընդդիմության, այնպես էլ իշխանության գործողությունների մասին, և նրա նյութերը կարելի էր իսկական լրագրողական նյութեր համարել: Այդ օրերին բացվեց դեռ մեկ ժամանակվա վարչապետ Սերժ Սարգսյանի բլոգը, որն աննախադեպ աժիոտած առաջացրեց հայաստանյան բլոգային համայնքում:

Ղայաստանում արտակարգ իրավիճակի պայմաններում բլոգները «արտակարգ» արդյունքներ ցուցադրեցին՝ «Ա1+»-ի բլոգը օրական ուներ 8500 այցելու, անվիպելու Ditord-ի բլոգի այցելուների թիվն անցավ 3500-ի սահմանը: Ավելի ակտիվ էին վիդեոբլոգները՝ «Ա1+»-ի և «E-channel»-ի վիդեոբլոգներն օրական 30-80000 այցելու էին ունենում: Այնտեղ տեղադրվում էին տեսանյութեր իրադարձությունների վայրից:

Ամիսածեշտ ենք համարում նկատել, որ այդ շրջանում բլոգների նկատմամբ ճշնումներ, գրաքննության կամ բլոգների համատարած արգելափակումներ չնկատվեցին: Ինչպես բլոգերներից շատերն են նշում, մարտյան օրերին բլոգոսֆերայում տեղեկատվական պատերազմ էր ընթանում երկու քաղաքական ճամբարների միջև: Քիչ թե շատ ապաքաղաքականացված գնահատականների ու տեղեկատվության բլոգներում չենք

¹⁶ Արթուր Պապյանի անձնական բլոգի // www.ditord.com, 2008:

¹⁷ Տիգրան Քոչարյանի անձնական բլոգի // Pigh.livejournal.com, 2008:

հանդիպում: Իշխանամետները հաստատում էին իշխանական օղակների պնդումները, ընդդիմադիր հայացքներ ունեցողները «ցեխ շարտում» գործող իշխանության վրա: Սովորական ընթերցողի համար այդ օրերին դժվար կլինեին կողմնորոշվել բլոգների բազմազանության մեջ:

Ակտիվ քաղաքացիների գանգվածային ներգրավվածությունը բլոգներում թույլ տվեց դրանք դարձնել տեղեկատվության օպերատիվ տարածման աղբյուր: Սա բերեց ավանդական ՋԼՄ-ների նկատմամբ հետաքրքրության անկման և մեծ հետաքրքրություն առաջացրեց բլոգների և սոցիալական ցանցերի նկատմամբ:

Գրականություն. (1), (4),(5), (6),(7), (8),(9):

Ղաա 13 (2 ժամ սեմինար պարապմունք)

ՔՆՆԱՐՎՎՈՂ ՀՎՐՑԵՐ

- Լրագրողի դերը հանրային անվտանգության համակարգում
- Տեղեկատվական պատերազմ վարելու մարտավարությունը
- Հայ բլոգերների գործունեությունը արտակարգ դրության պայմաններում

Ղաա 14-16 (6 ժամ դասախոսություն)

Թեմա 8

Տեղեկատվական պատերազմները սոցիալական ցանցերում և էլեկտրոնային հանրագիտարաններում

Համացանցային ՋԼՄ-ները և դրանց ազդեցության ոլորտը: Համաշխարհային տեղեկատվական ցանցի հնարավորությունները: Համացանցի զարգացման դրական և բացասական կողմերը: Ցանցային լրագրությունը:

Օգտագործելով նոր մեդիայի հնարավորությունները՝ աղբյուրների հաքերները սկսեցին տեղեկատվական հարձակումներ գործել միջազգային ճանաչված և հեղինակություն վայելող սոցիալական ցանցերի հայկական տարբերակների և հեղինակավոր «Վիկիպեդիա» հանրագիտարանի հայկական էջերի վրա: Էլեկտրոնային «Վիկիպեդիա» հանրագիտարանը շարունակում է մնալ հայ-աղբյուրների տեղեկատվական պատերազմի թատերաբեմերից մեկը: Հաճախ այդ պատերազմները տեղի են ունենում միաժամանակ զուգահեռ ճակատներում: Այսպես, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում բացահայտվեց աղբյուրների հաքերների մի խումբ, որն զբաղված էր այդ ցանցում հայկական թարգմանական տեքստերի աղճատմամբ: Ինչպես նաև հարձակման էր ենթարկում ցանցի հայկական օգտատերերի կայքերը: Աղբյուրների հաքերները ընտրել էին «Եկեք հարձակ-

վեք հայկական «Ֆեյսբուք» վրա» անվանումը, այդ խմբի մասնակիցների թիվը հասնում էր 700-ի: Խմբի մեծ մասը Աղբյուրների քաղաքացիներ էին, որոնք հայկական թարգմանական տեքստերի փոխարեն տեղադրում էին վիրավորական արտահայտություններ և ազգայնամոլական կոչեր: Հայ օգտատերերը դեպքի կապակցությամբ տեղյակ պահեցին «Ֆեյսբուք» սպասարկող ծառայությանը, որը մեծ դժվարությամբ կարողացավ վերականգնել հայ օգտատերերի իրավունքները: Հիմնականում հայ օգտատերերի անջկացված զանգվածային ջլճարության շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել հայերեն թարգմանությունների ճիշտ տարբերակները:¹⁸

Ի պատասխան աղբյուրների հաքերների մի խումբ հայ «Facebook»-ցիների կողմից ստեղծվեց Հայկական պաշտպանական խումբ, որի նպատակն է աշխարհի ամենամեծ սոցիալական ցանցում աղբյուրների քաղաքացիական հարձակումներից պաշտպանել հայկական էջերն ու խմբերը: Հայկական պաշտպանական խումբը, համագործակցելով տարբեր մեծաքանակ և ակտիվ խմբերի հետ, հայտնաբերել է հայկական անունների ներքո գործող թուրքերի և աղբյուրներից:

Նույն ժամանակահատվածում աղբյուրների հաքերների կողմից ձևավորվել էր մեկ այլ խումբ, որը հարձակումներ էր գործում YouTube վիդեոցանցի վրա:

Աղբյուրների հաքերների նմանօրինակ ակտիվացումը կապված էր «Վիկիպեդիա» խոշորագույն բազմալեզու ինտերնետ-հանրագիտարանի ռուսալեզու բաժնի 26 խմբագիրների նկատմամբ կիրառված պատժի հետ: Այսպես կոչված 26 խմբագիրները, որոնք աղբյուրներից էին, ամիսներ շարունակ ջանապարհաբար և նպատակամղված «խմբագրում էին» և «անհրաժեշտություն» դեպքում «ակտիվություններ» կատարում ինտերնետ-հանրագիտարանում տեղադրված՝ Հայաստանի և հատկապես Լեռնային Ղարաբաղին նվիրված հոդվածներում: «Բաքվեցի 26 խմբագիրները» ոչ պակաս կրքեր էին փորձում բորբոքել իրենց հետաքրքրության շրջանակում գտնվող և իրենց «կարծիքով» այլ վիճաբարյց հոդվածների նկատմամբ ևս: 26 խմբագիրների «բուռն գործունեությունը» արագ նկատվեց «Վիկիպեդիայի» արբիտրաժային կոմիտեի կողմից, որը «բաքվեցի 26 խմբագիրներին» 3-ից 6 ամիս ժամկետով զրկեց հանրագիտարանի ռուսալեզու էջերը «խմբագրելուց»: Հանրագիտարանի արբիտրաժային կոմիտեի որոշմամբ, «26 վայ-խմբագիրներին» արգելվել է հետագայում ևս մասնակցել հանրագիտարանի ռուսալեզու էջերում, «իրենց կարծիքով», «վիճաբար»

¹⁸ В Facebook обнаружена группа «Давайте атакуем армянский Facebook», занимавшаяся искажением армянского перевода сети // PanArmenian.net. - 2010, 7 июля.

րույց» հողվածների խմբագրմանը:¹⁹ Վարդղանալով հակափաստարկներ ներկայացնել մի շարք բաժիններում զետեղված տեղեկատվության վերաբերյալ, մասնավորապես՝ «Լեռնային Դարաբաղ», «Հայաստան», «Արցախ», արդրեջանցիները վայնատուն բարձրագրին հայկական կողմի գործարած ջանքերի նկատմամբ՝ վերջիններիս մեղադրելով հակաբարոզչության և պատմական փաստերի աղավաղման համար:

Նմանօրինակ պահվածքը և «թարմ ականջ» գտնելու սովորությունը մեկ անգամ ևս վկայում են, որ, ինչպես պատերազմի դաշտում, այնպես էլ տեղեկատվական պատերազմի տարբեր ճակատներում պարտվելուց հետո, արդրեջանցիները հոգեբանորեն պատրաստ չեն ընդունելու, որ իրենց պարտության մատնողը ոչ թե ռուսն է, իրենք, կամ մեկ այլ ազգի ներկայացուցիչ, այլ իրենց դրկից հայն է, որի «միակ մեղքը» իր հայրենի եզերքն ու մշակույթը պաշտպանելն է նախկին քոչվոր և հավակնոտ հարևանից:

Ռեմա 9

Համացանցային հեռուստահեռարձակման հնարավորությունների օգտագործումը տեղեկատվական պատերազմներում

Հեռուստատեսությունը որպես ռազմավարական գեներ: Հեռուստատեսության մասսայականության պատճառներն ու հետևանքները: Հեռուստատեսության հնարավորությունները և դրանց կիրառումը: Իրական և կեղծ պատկերների համադրումը: Չայնի և պատկերի ազդեցության արհեստական ուժեղացումը: «Թշնամու» կերպարի կերտումը և դրա «ոչնչացումը» հեռուստատեսության միջոցով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նորանոր հնարավորություններ է ընձեռում համացանցում տեղեկատվական առկա ռեսուրսները առավել հասցեագրված, նպատակային օգտագործելու և առաջադրված խնդիրները իրագործելու համար: Համացանցում հեռուստատեսային և ռադիոտարբերակների կիրառումը, մեծածավալ տեսանյութերի և պատկերների զետեղումը հնարավորություն է տվել ձևավորելու տեղեկատվական հզոր բազա, որի ազդեցությունը դժվար է թերագնահատել:

Այդ առումով անհրաժեշտ է առանձնացնել երկու կարևոր ուղղություն՝ արբանյակային հեռարձակումը և համացանցում տեսանյութերի տեղադրումը:

Արբանյակային հեռարձակում

Արբանյակային հեռարձակումը հնարավորություն է տալիս հեռարձակողին սեփական տեղեկատվությունը հասցնել թիրախային լսարանին: Ներկայումս արբանյակային հեռարձակում են իրականացնում 37 հինգ հեռուստաընկերություններ: Հայաստանյան առաջին հեռուստաընկերությունը, որ սկսեց հեռարձակվել ողջ աշխարհով, Հանրային հեռուստաընկերությունն է: Այն հեռարձակվում է 2005-ից «Համահայկական հեռուստատեսություն» անվան ներքո:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության ծրագիրն այսօր կարելի է դիտել Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում: 2005թ. փետրվարից Համահայկական հեռուստատեսության արբանյակային հեռարձակումն իրականացվում է գերժամանակակից, նորագույն արբանյակներով՝ Եվրոպայում հաղորդումները հեռարձակվում են EutelSat W1 և Hot Bird 6 արբանյակների միջոցով, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Intelsat Americas 5-ի միջոցով: Հանրային հեռուստատեսությունն այսօր էլ հայկական ամենախոշոր հեռարձակման ցանցն է:

2001թ. Հանրային հեռուստատեսության և «GlobeCast» ընկերության միջև կնքված պայմանագրի արդյունքում հայկական ծրագրերը արբանյակային հեռարձակմամբ սփռվեցին նաև ԱՄՆ-ում և Կանադայում: Նկատի ունենալով Միացյալ Նահանգներում հեռարձակման առանձնահատկությունները՝ Համահայկական հեռուստատեսությունն այստեղ հեռարձակվում է երկու եղանակով. կամ տեղադրելով արբանյակային ընդունիչ՝ միանալ Intelsat Americas 5 արբանյակին, կամ էլ բաժանորդագրվել Charter Systems համակարգին:

Չարկ է ուշել, սակայն, որ Համահայկական հեռուստալիքի հաղորդումների բացարձակ մեծամասնությունը կրկնում է «Հ1»-ի հաղորդումները: Հեռարձակման միակ լեզուն հայերենն է: Սա զգալիորեն նվազեցնում է հնարավորությունների այն շրջանակը, որն ընձեռում է արբանյակային հեռարձակումը, քանզի, եթե հեռարձակման լեզուն հայերենն է, այն կարող են դիտել առավելապես հայերը, ինչպես նաև հայերեն լեզուն ուսումնասիրողները: Իհարկե, այս պարագայում «Հ1»-ը որոշակի առումով հայապահպան գործունեություն է կատարում և նպաստում է Սփյուռքում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը: Սակայն, մյուս կողմից, Հայաստանի մասին պատմող օտարալեզու հաղորդումները, մեր կարծիքով, որևէ կերպ չէին խանգարի այդ կարևոր գործին, ավելին՝ կնպաստեին, որպեսզի հայերենին ստիրապետող մեր հայրենակիցները ևս տեղեկատվություն ստանան իրենց պատմական հայրենիքի վերաբերյալ և ցանկություն հայտնեն այցելել Հայաստան: Սակայն մնան օտարալեզու հաղորդումների հիմնական թիրախը Սփյուռքի մեր հայրենակիցները չպետք է լինեն: Օտարալեզու հե-

¹⁹ www.ananun.am

նարձակումն ուղղված է առաջին հերթին «չեզոք», «չկողմնորոշված», «անտեղյակ» հեռուստադիտողին, որի նպատակն է գրավել նրան, կողմնորոշել դեպի բեզ, համոզիչ փաստարկներով դարձնել թո երկրի բարեկամը, ի վերջո, պատշաճ կերպով ներկայանալ աշխարհին, ձևավորել երկրի դրական իմիջ՝ ցուցադրելով հարուստ պատմությունն ու մշակույթը:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ նպատակահարմար և արդյունավետ ենք համարում, որպեսզի Հայաստանի համարյաին հեռուստաընկերության արժանակով հեռարձակվող հաղորդումների մի մասը թարգմանվի օտար լեզուներով, մասնավորապես, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն, թուրքերեն, պարսկերեն: Միջոցները խնայելու համար թարգմանությունը կարող է սինխրոն չլինել, այլ օգտագործվի տողատակի տեքստի տարբերակը, ինչպես արվում է մի շարք երկրներում: Այս պարագայում հարկավոր կլինեն միայն փորձառու թարգմանիչներ, ովքեր կկարողանան ճիշտ կերպ մատուցել տեղեկատվությունը: Օտարալեզու լսարանին պետք է ներկայացվեն ոչ միայն և ոչ այնքան առօրյա լուրերը, որքան Հայաստանի մշակույթը, բնությունը և պատմությունը ներկայացնող վավերագրական ֆիլմեր, անվանի հայերի մասին հետաքրքիր հաղորդումներ և այլն:

Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ ներկայումս արբանյակային հեռարձակումն ունեցող մյուս երեք ալիքները՝ «Շանթը», «Արմենիա»-ն և «Երկիր մեդիա»-ն ևս չեն լրացնում վերոհիշյալ բազը, քանզի դրանք ևս հեռարձակվում են հայերեն լեզվով: Ավելին, եթե Համահայկական հեռուստաալիքը որոշակի ուշադրություն է դարձնում հեռարձակվող հաղորդումների դաստիարակչական և հայապահպան կողմերին, ապա մյուս հեռուստաընկերությունները, լինելով մասնավոր և շահույթ հետապնդող կազմակերպություններ, ղեկավարվում են առաջին հերթին տնտեսական շահով, ինչը տվյալ պարագայում բացատրելի է՝ հաշվի առնելով արբանյակային հեռարձակման բարձր գները:

Համացանցում տեսանյութերի տեղադրումը

Ջարգացման անհրաժեշտություն ունեցող երկրորդ ուղղությունը համացանցում տեսանյութերի տեղադրումն է, ինչպես նաև համացանցով հեռուստահաղորդումների հեռարձակումը:

Հայաստանում այլընտրանքային համացանցային հեռուստատեսությունն այժմ դանդաղ, բայց զարգանում է՝ անճորհատ բախվելով հիմնական խոչընդոտին՝ կապի ցածր որակին:

Այդուհանդերձ, չնայած խնդիրներին, այսօր երկրում գործում են գարգացման փուլում գտնվող այլընտրանքային հեռուստաընկերություններ, որոնք, թեպետ, համացանցում չեն հեռարձակվում, բայց տեղադրում են տեսանյութեր, ինչպես, օրինակ, «Ա1+»-ը: Միայն համացանցով չբավարարվե-

լով՝ հեռուստաընկերությունը նաև սկսել է տրամադրել բջջային լուրերի ծառայություն, որի միջոցով կարելի է օրվա գլխավոր լուրերի կարճ տեսագրությունը ստանալ բջջային հեռախոսի վրա:

Համացանցի կապի ցածր որակը մատնանշելով՝ ինտերնետային ծառայություններ մատուցող որոշ ընկերությունների ներկայացուցիչներ ասում են, որ Հայաստանում համացանցային հեռուստատեսության զարգացման մասին խոսելը դեռ վաղ է:

«Լիարժեք ինտերնետային հեռուստատեսություն ստեղծելու համար պետք է լայնաշերտ, արագ Ինտերնետ ցանց, որի համար պետք են մեծ ներդրումներ, ինչն այսօր չի արվում», - ասում է Հայաստանի Ինտերնետ մատակարարող ամենախոշոր ընկերություններից մեկի՝ «Վեբ»-ի տնօրենը: Բացի ներդրումներից, անհրաժեշտ են նաև բավարար բանակույթամբ բաժանորդներ, որպեսզի ընկերությունը կարողանա հոգալ ցանցի ծախսերը:²⁰

Այսօր համացանցում բազմաթիվ կայքեր և պորտալներ են գործում, որոնք հնարավորություն են տալիս ցանկացած մարդու աշխարհի ցանկացած կետից ներբեռնել տեսանյութը և այն հասանելի դարձնել համաշխարհային հանրությանը: Դրանցից ամենախոշորը և ամենազանգվածայինը YouTube-ն է՝ <http://www.youtube.com>: Յուդբեյնյուբ օր այս կայքը համարվում է ամենատարբեր բնույթի միլիոնավոր նոր տեսանյութերով, իսկ նրա արխիվներում արդեն պահպանվում է մոտ երկու միլիարդ տեսանյութ, տեսահոլովակ, զովազդային տեսահոլովակ, հեռուստահաղորդում և այլ տիպի տեսանյութ: YouTube-ի հնարավորություններն անսահմանափակ են, մի շարք կազմակերպություններ և նույնիսկ պետություններ քաջ գիտակցելով դա, փորձում են լայնորեն օգտագործել YouTube-ը սեփական շահերից մեկնելով՝ գովազդելով սեփական արտադրանքը և փնտվելու ու քննադատելով մրցակցինը: Հարկ է նշել, որ YouTube-ն այսօր վերածվել է հայ-արդաբանական և հատկապես հայ-արդեքնանական տեղեկատվական թեժ պատերազմի հարթակի, մեր հարևան երկրները կիրառում են քարոզչության և հակաքարոզչության ամենատարբեր մեթոդները՝ սկսած հայերին արատադրող ամենապարզունակ վիրավորանքներից՝ վերջացած հատուկ այդ նպատակով նկարահանած ֆիլմերը տեղադրելով, որոնք հաճախ թարգմանվում են աշխարհի տարբեր լեզուներով: Հայկական կողմը փորձում է դիմակայել հսկայական այդ հոսքին և սեփական տեսանյութերն է տեղադրում YouTube-ում, որոնք հաճախ պարունակում են Դարաբաղյան պատերազմի և Հայոց Ցեղասպանության մասին պատմող վավերագրական կադրեր և

²⁰ Տեղեկատվական հասարակությունը Հայաստանում. պատրանք, թե՛ իրականություն // www.armtown.com, 2008, մայիս:

արխիվային տեսագրություններ: Անհրաժեշտ է նշել, որ YouTube-ը պարունակում է նյութերի բողոքարկման հստակ մեխանիզմներ, այսինքն՝ ցանկացած ոք կարող է դիմել կայքի ադմինիստրացիային, շեշտելով, որ այս կամ այն նյութը արատավորում կամ վիրավորում է իր պատիվը կամ ապատեղեկատվություն է պարունակում: Սակայն դա չի նշանակում, որ կեղծարարը չի կարող միևնույն տեսանյութը նույն կայքում այլ անվան տակ գետեղել:

YouTube-ի արդյունավետությունն այնքան մեծ է, որ այժմ բազմաթիվ երկրներ մնանատիպ կայքեր են բացում իրենց ազգային սեզմենտում: Օրինակ, Ռուսաստանում հայտնի է RuTube-ը, իսկ հայկական ինտերնետում տարածքում՝ HayTube-ը: Վերջիններս պարունակում է հիմնականում զվարճալի բնույթի տեսանյութեր, հաղորդումների հատվածներ, տեսահոլովակներ և չի կարող լուրջ գործոն հանդիսանալ տեղեկատվական ասպարեզում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նորանոր հնարավորություններ է ընձեռում համացանցում տեղեկատվական առկա ռեսուրսները առավել հասցեագրված, նպատակային օգտագործելու և առաջադրված խնդիրները լուծելու համար: Համացանցում տեղեկատվության և ռադիոտարբերակների կիրառումը, մեծածավալ տեսանյութերի և պատկերների զետեղումը հնարավորություն է տվել ձևավորելու տեղեկատվական հզոր բազա, որի ազդեցությունը դժվար է թերագնահատել:

Գրականություն. (1), (3),(4), (6), (7), (17), (19), (21), (23), (25), (26):

**Պատ 17 (2 ժամ սեմինար պարապմունք)
ՔՆԱՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ**

- Համաշխարհային տեղեկատվական ցանցի հնարավորությունները:
- Համացանցի զարգացման դրական և բացասական կողմերը:
- Հեռուստատեսությունը որպես ռազմավարական զենք:
- Հեռուստատեսության հնարավորությունները և դրանց կիրառումը:

Հանձնարարվող գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգ, Երևան, 2008:
2. Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, Երևան, 2008:
3. Հարությունյան Գ., Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում // 21-րդ դար, Երևան, 2006, N2, էջ 6:
4. Մանայան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա տեղի ունցել // Երևան, 2010, էջ 35, 65:
5. Մարտիրոսյան Ս., Արդի ինֆոգեոմ մարտահրավերները // Գլոբուս, 2009, N2, էջ 22:
6. Մարտիրոսյան Ս., Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության մի քանի հարցեր // 21-րդ դար, Երևան 2007, N2, էջ 62:
7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգ, Երևան, 2008:
8. Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, Երևան, 2008:
9. Քեչարյան Տիգրանի անձնական բլոգից // Pigh.livejournal.com, 2008:
10. Պապյան Արթուրի անձնական բլոգից // www.ditord.com, 2008, մարտ:
11. Вепринцев В.Б., Манойло А.В., Петренко А.И., Фролов Д.Б., Операция ниформационно-психологической войны // Краткий энциклопедический словарь-спавочник. - М., 2005. - С. 68.
12. Волковский Н.Л., История информационных войн. - СПб., 2003. - 258 с.
13. Казеннов В. П., Основы ведения информационной войны // www.lib.ru., 2008.
14. Кара-Мурза С. Г., Смирнов С., Манипуляция сознанием-2. - М., 2009. - 528 с.
15. Панарин И.Н.,Технология информационной войны. - М., 2003. - 216 с.
16. Панарин И.Н., Панарина Л.Г., Информационная война и мир. - М., 2003. - 283 с.
17. Панарин И. Н., Информационная война, PR и мировая политика. - М., 2006. - 378 с.
18. Поляков Ю.А., Информационная безопасность и СМИ. - М., 2004. - 320 с.
19. Почепцов Г.Г., Информационно-психологическая война. - М., 1999. - 648 с.

20. Почепцов Г.Г., Информационные войны. - М., 2002. - 560 с.
21. Почепцов Г.Г., Пропаганда и контрпропаганда. - М., 2004. - 256 с.
22. Почепцов Г.Г., Психологические войны. - М., 2008. - 528 стр.
23. Прокофьев В.Ф., Тайное оружие информационной войны. - М., 1999. - 128 с.
24. Засурский Я. Н., Вартанова Е. Л., От книги до интернета: Журналистика и литература на рубеже нового тысячелетия. - М., 2000. - С. 27.
25. Лассуел Г., Коммуникативный процесс и его структуры // Современные проблемы социальной коммуникации. - СПб., 1996;
26. Jowen G.S., O'Donnell V., Propaganda and persuasion.- Newbury Park, 1992, P. 320.
27. Laqueur W., World of secrets. The use and limit of intelligence. – London, 1985, P. 287.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՎԻԹ ՀՐԱՅՐԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Տեղեկատվական

պատերազմներ

(դասախոսություններ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ.Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մանուլը՝ 2,5:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1